Իմ Կյանքի Պատմությունը

Մի պահ խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար։

Մեր ողորմած Երկնային Հայր, սա իրոք առանձնաշնորհում է մեզ համար մոտենալ Քեզ՝ մեր Աստծուն և Փրկիչին։ Լսելով այս հրաշալի երգը՝ *«Ինչ մեծ ես Դու»*, մենք հուզվում ենք, քանի որ գիտենք, որ մեծ ես Դու։ Մենք խնդրում ենք, որ Քո մեծությունը նորից հայտնի լինի մեզ այսօր, երբ մենք կխոսենք։ Բազում տարիների ընթացքում առաջին անգամ ինձ բախտ է վիճակվել փորձել վերադառնալ անցյալ, և ես խնդրում եմ, որ ինձ ուժ տաս և, և այն, ինչի կարիքը ես ունեմ, Տե՛ր, այս ժամում։ Եվ թող կյանքում կատարած իմ բոլոր սխալները լինեն մյուսների համար ընդամենը մեկ աստիճան, որը նրանց ավելի կմոտեցնի Քեզ։ Ծնորհի՛ր այդ, Տե՛ր։ Թող մեղավորները տեսնեն ոտնահետքերը ժամանակի ավազի վրա, և թող նրանք առաջնորդվեն դեպի Քեզ։ Մենք սա խնդրում ենք Տեր Հիսուսի Անունով։ Ամեն։

Կարող եք նստել։

2 [Եղբայր Գլովերն ասում է. «Նախքան սկսելը կարո՞ղ եք աղոթել այս թաշկինակների համար»։ Ծան. Խմբ.]։ Ես ուրախ կլինեմ։ [«Պետք է աղոթել *սրանց* և *դրանց* համար»]։ Լավ, պարոն, շնորհակալ եմ։ Ինչպես այս սուրբ մարդը՝ եղբայր Գլովերը, ում մի քանի տարի է, ինչ ճանաչում եմ, անցած երեկո պատիվ ունեցա մի որոշ ժամանակով լինել նրա հետ։ Եվ նա պատմեց ինձ այն մասին…նա մի որոշ ժամանակ գամված էր մահճակալին, հանգստանում էր։ Իսկ այժմ յոթանասունհինգ տարեկան հասակում նա նորից վերադառնում է Տիրոջը ծառայելուն։ Երբ դա լսեցի, իմ հոգնածության կեսը վերացավ։ Ես կարծում էի, որ հոգնած եմ, բայց հիմա ես, ես չեմ հավատում դրան։ Նա հենց նոր դրեց այստեղ՝ իմ առջև մի քանի թաշկինակներ, ծրարների մեջ դրված և այլն, որտեղ նրանք ներսում են և արդեն փաթեթավորված։

3 Այժմ ձեզանից ցանկացածը, որ լսում է ռադիոյով և այստեղ գտնվողները, ովքեր ցանկանում են այս թաշկինակներից մեկը, եթե կուզենաք…Հրեշտակի

Տաճարից դրանք անընդհատ, ամեն ժամանակ առաքում են: Դուք կարող եք անմիջապես գրել այստեղ՝ Հրեշտակի Տաճարին և նրանք կաղոթեն դրա վրա, որովհետև հավատացնում եմ ձեզ, Սա սուրբգրային է: Սա Աստծո խոստումն է:

4 Իսկ եթե ցանկանաք, որ ես աղոթեմ թաշկինակի վրա ձեզ համար, ուրախ կլինեմ անել այդ: Պարզապես գրեք ինձ հետևյալ փոստային հասցեով՝ 3-2-5, 325, Ջեֆերսոնվիլ, Ջ-ե-ֆ-ե-ր-ս-ո-ն-վ-ի-լ, երկու «լ»-ով, Ջեֆերսոնվիլ, Ինդիանա նահանգ: Իսկ եթե փոստային հասցեն մոռանաք, պարզապես գրեք «Ջեֆերսոնվիլ»: Ջեֆերսոնվիլը փոքրիկ, շուրջ 35.000 հազար բնակիչ ունեցող քաղաք է: Այնտեղ բոլորը ինձ ճանաչում են: Այնպես որ մենք ուրախ կլինենք աղոթել թաշկինակի վրա և առաքել ձեզ:

5 Եվ հիմա մենք այս հարցում մեծ հաջողություն ունեցանք, որովհետև...Դրա հետ ձեզ կուղարկեն նամակի տեսքով փոքրիկ մի գրություն, որի մեջ ասվում է, որ մարդիկ ամբողջ աշխարհով մեկ ամեն առավոտ ժամը ինին, տասներկուսին և երեքին աղոթում են: Կարո՞ղ եք պատկերացնել, թե գիշերվա ժամը քանիսին ամբողջ աշխարհով մեկ նրանք պետք է վեր կենան՝ այս աղոթքն անելու համար: Այնպես որ եթե բոլոր այս տաս հազարավոր, հազարների բազմապատկած աղոթքները միևնույն ժամանակում հղվում են Աստծուն այս ծառայության, ձեր հիվանդության համար, Աստված պարզապես չի կարող երեսը դարձնել դրանից: Եվ հիմա մենք, ինչպես արդեն ասացի, ոչ մի ծրագրեր չունենք, մեզ ոչ մի ցենտ հարկավոր չէ: Մենք պարզապես...Եթե մենք կարող ենք ձեզ օգնել, դրա համար ենք մենք այստեղ: Եվ եկե՛ք...

Ինչ-որ մեկը թաշկինակների էլի մի կույտ է բերում:

6 Եթե թաշկինակ չեք կարող ուղարկել, այդ դեպքում պարզապես գրեք: Եթե դուք չունեք դրա կարիքը հիմա, ապա պահե՛ք այն Աստվածաշնչում, որտեղ Գործք Առաքելոց 19-րդ գլուխն է: Դա փոքրիկ սպիտակ ժապավենի տեսքով կլինի, որը կուղարկվի ձեզ հորդորանքով, թե ինչպես նախևառաջ պետք է խոստովանեք ձեր մեղքերը: Եվ (շնորհակալ եմ), թե ինչպես խոստովանեք ձեր մեղքերը: Դուք չպիտի երբևէ փորձեք ինչ-որ բան ստանալ Աստծուց՝ առանց նախ Նրա հետ հաշտվելու: Հասկանո՞ւմ եք: Եվ հետո այնտեղ ձեզ

սովորեցնում են, որ կանչեք ձեր մտերիմներին ու հովվին։ Եթե ձեր սրտում ինչ–որ բան ունեք որևէ մեկի դեմ, նախ գնացե՛ք կարգի բերեք այն և հետո վերադարձեք։ Եվ այդ ժամանակ աղոթեք, աղոթքի ժողով ունեցեք ձեր ընտանիքներում, և այս թաշկինակը քորոցով ամրացրեք ձեր ներքնազգեստին, այդ ժամանակ հավատացե՛ք Աստծուն։ Եվ ամեն օր հենց այդ երեք ժամերի ընդացքում մարդիկ ամբողջ աշխարհում աղոթելու են, այդպիսի շղթա է աշխարհով մեկ։

7 Եվ հիմա սա ձերն է, բացարձակապես անվճար է, պարզապես ուղարկեք։ Մենք պատասխան նամակ չենք գրելու ձեզ՝ վճարի մասին հիշեցնելու կամ պատմելու ձեզ մեր ինչ–որ մի ձրագիր մասին։ Մենք ուզում ենք, որ դուք ձրագիրն աջակցեք, բայց մենք չունենք որևէ ձրագիր ձեզ նյութպես աջակցելու համար։ Հասկանո՞ւմ եք։ Այնպես որ դուք…Դա չի արվում այն բանի համար, որ ձեռք բերենք ձեր հասցեն, սա ընդամենը համաձայնեցում է ու Տիրոջ ծառայություն, որը մենք փորձում ենք շարունակել։

8 Այժմ խոնարհենք մեր գլուխները։ Իսկ եթե դուք մեզ լսում եք ռադիոյով, թող ձեր թաշկինակը մնա այնտեղ, պարզապես ձեր ձեռքը դրե՛ք դրա վրա, մինչ մենք աղոթում ենք։

9 Ողորմա՛ծ Տեր, մենք այս փոքրիկ ծանրոցները բերում ենք Քեզ, գուցե դրանցից որոշների մեջ կարծես մանկական շապիկ կամ, կամ ինչ–որ ներքնաշապիկ է, կամ գուցե մի զույգ փոքրիկ կոշիկներ կամ, կամ նման մի բան, թաշկինակ, որն ուղարկվելու է հիվանդներին և տառապյալներին։ Տե՛ր, մենք սա անում ենք Քո Խոսքի համաձայն, որովհետև Գործք Առաքելոց գրքում կարդում ենք, որ նրանք վերցնում էին Քո ծառայի՝ Պողոսի մարմնի վրայից թաշկինակներ ու գոգնոցներ, որովհետև նրանք հավատում էին, որ Քո Հոգին այդ մարդու վրա էր։ Եվ պիղծ ոգիները դուրս էին գալիս մարդկանց միջից, և ցավերն ու հիվանդությունները հեռանում էին նրանցից, որովհետև նրանք հավատում էին։ Եվ հիմա մենք գիտակցում ենք, Տե՛ր, որ մենք Սուրբ Պողոսը չենք, բայց մենք գիտենք, որ Դու դեռ նույն Հիսուսն ես։ Եվ մենք խնդրում ենք որ Դու պատվես այս մարդկանց հավատքը։

10 Եվ մի անգամ դա ասվել է, որ երբ Իսրայելը փորձելով հնազանդվել Աստծուն, ընկավ ծուղակի մեջ՝ ծովը նրանց առջևում էր, իսկ մյուս կողմից սարերն էին, և Փարավոնի զորքը մոտենում էր։ Եվ ինչպես մեկն ասաց. «Աստված

Կրակե Սյան միջոցով զայրացած հայացքով նայեց ցած, ծովը վախեցավ և ետ քաշվեց, ճանապարհ բացելով Իսրայելի համար, որ անցնի Ավետյաց երկիր»:

11 Ո՛վ Տեր, կրկին նայիր ցած, երբ այս ծանրոցներն, ի նշանավորումն Քո կենդանի Խոսքի, կդրվեն հիվանդ մարմինների վրա: Եվ թող հիվանդությունը վախենա. նայի՛ր Քո Որդու՝ Հիսուսի Արյան միջով, Ով մահացավ այս փրկագնման համար: Եվ թող թշնամին վախենա և հեռանա, որպեսզի այս մարդիկ կարողանան շարժվել խոստմունքի մեջ, որ «Ամեն բաներից վեր է», դա է Քո ցանկությունը «որ մենք բարգավաճենք առողջության մեջ»: Ծնորհի՛ր այդ, Տե՛ր, որովհետև մենք ուղարկում ենք այս թաշկինակները մեր սրտում ունեցած այդպիսի, այդպիսի վերաբերմունքով: Մենք ուղարկում ենք սա Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

Ծնորհակալ եմ, եղբա՛յր Գլովեր: Ծնորհակալ եմ, պարոն:

12 Այժմ, այս երեկոն կլինի արթնության այս մասի ավարտը, և ես չգիտեմ, արդյոք սա կհեռարձակվի, թե՞ ոչ, (բայց եթե չհեռարձակվի), ես կուզենայի ասել ռադիոլսողներին, որ բազում, բազում տարիների ընթացքում սա իմ երբևէ ունեցած ամենահիանալի հավաքույթներից մեկն էր: Սա զորացնող, առողջ, սիրով լեցուն, համատեղ հավաքույթ էր, որին ես երկար ժամանակ մասնակցել եմ:

13 [Ինչ-որ մի եղբայր ասում է. «Մենք եթերում կլինենք մինչև հինգ անց տասնհինգ, եղբայր: Եվ ամբողջ հարավային Կալիֆոռնիայով մեկ, կղզիների և նավերի վրա լսում են ձեզ: Մենք հաղորդագրություններ ենք ստանում նրանցից: Այնպես որ դուք մեծ լսարան ունեք, հազարավոր և տասնյակ հազարավոր մարդիկ»: Ծան. Խմբ.]: Ծնորհակալ եմ, պարոն: Շատ լավ է: Ուրախ եմ դա լսել: Աստված օրհնի ձեզ բոլորիդ:

14 Եվ, անշուշտ, Հրեշտակի Տաճարը միշտ հատուկ տեղ է զբաղեցրել իմ սրտում, որովհետև նա կանգնած է Հիսուս Քրիստոսի Ամբողջական Ավետարանի համար: Եվ հիմա այն, այն կարծես թե ավելի հոգեհարազատ է դարձել ինձ համար: Կարծես թե, ժողովից հետո բոլորի հետ հանդիպելով և իրենց հիանալի հոգին տեսնելով, ինձ թվում է, թե ես է՛լ ավելի դարձա ձեզանից մեկը, քան առաջ էի: Թող Աստված օրհնի ձեզ, սա է իմ աղոթքը:

Եվ...[Լսարանը ծափահարում է: Ծան. Խմբ.]: Սրտանց շնորհակալ եմ:

15 Եվ այսպես, հայտարարված է եղել, որ ես այսօր փոքր ինչ պատմելու եմ ձեզ *իմ կյանքի պատմության* մասին: Ինձ համար դա դժվար բան է: Բազում տարիների ընդացքում առաջին անգամն է, որ ես փորձելու եմ անել դա: Եվ ես ժամանակ չեմ ունենալու մանրամասնությունների մեջ մտնել, այլ ընդամենը դրա մի մասն եմ շոշափելու: Եվ, այստեղ, ես շատ սխալներ եմ գործել, արել եմ բաներ, որոնք ճիշտ չեն եղել: Եվ ես կցանկանայի, որ նրանք, ովքեր լսում են ռադիոյով, ինչպես նաև նրանք, ովքեր ներկա են գտնվում իմ սխալները չդիտարկեն՝ որպես գայթակղության քարեր, այլ քարեր, որոնք ավելի են մոտեցնելու ձեզ Տեր Հիսուսին:

16 Հետո, այսօր երեկոյան աղոթքի քարտեր են բաժանվեու այս երեկոյան բժշկության ծառայության համար: Երբ խոսում ենք *բժշկության ծառայության* մասին չի նշանակում, որ մենք պատրաստվում ենք բժշկել ինչ–որ մեկին, մենք պատրաստվում ենք «աղոթել ինչ–որ մեկի համար»: Բժշկություն անողն Աստված է: Նա պարզապես իմ նկատմամբ շատ ողորմած էր, պատասխանելով աղոթքներին:

17 Վերջերս խոսում էի հայտնի մի ավետարանչի կառավարիչի հետ, և, և հարց տրվեց, թե այդ ավետարանիչն ինչու չի աղոթում հիվանդների համար: Եվ այդ ավետարանիչը իմ հավաքների կառավարիչին ի պատասխան ասել էր. «Եթե...»: Այդ ավետարանիչը հավատում է աստվածային բժշկությանը: Բայց եթե նա սկսեր աղոթել հիվանդների համար, դա կխոչընդոտեր իր ծառայությանը, որովհետև եկեղեցիներն են հովանավորում նրան: Շատ եկեղեցիներ, և նրանցից շատերը աստվածային բժշկությանը չեն հավատում:

18 Ես հարգում և պատվում եմ այդ ավետարանչին, որովհետև նա պահում է իր տեղը, իր պաշտոնը: Գուցե նա կարողանար...Ես երբեք չէի զբաղեցնի նրա տեղը, և կասկածում եմ, որ նա էլ կկարողանար զբաղեցնել իմ տեղը: Մենք բոլորս տեղ ունենք Աստծո թագավորության մեջ: Մենք բոլորս իրար հետ կապված ենք: Տարբեր պարգևներ են, բայց նույն Հոգին է: Ուզում էի ասել՝ տարբեր դրսևորումներ են, բայց նույն Հոգին է:

19 Եվ այսպես, այսօր երեկոյան ծառայությունները սկսվելու են...Եթե չեմ սխալվում, նրանք ասացին, որ ծրագիրը սկսվում է ժամը վեց անց կեսին: Իսկ, այժմ, եթե դուք միացել եք ալիքին, ապա լսենք սա: Այն...Այն ինչպես միշտ հրաշալի է լինելու:

20 Բացի այդ, կուզենայի ասել, որ աղոթի քարտերը բաժանվելու են այս ծառայությունից անմիջապես հետո, հենց որ ժողովը արձակվի, եթե դուք այստեղ եք լինելու և կցանկանաք աղոթքի քարտ: Ընդհամենը մի քանի րոպե առաջ ինձ հայտնեցին այդ մասին, տղաս, պարոն Մերսերը կամ պարոն Գոուդը՝ նրանք են բաժանելու աղոթքի քարտերը: Պարզապես մնացեք ձեր տեղում: Հենց որ ժողովն արձակվի, պարզապես մնացեք ձեր տեղերում, որ տղաները կարողանան անցնել շարքերով և հնարավորինս արագ բաժանել աղոթքի քարտերը: Լինի դա պատշգամբներում, թե սրահում, ամենուր՝ ներքևի հարկերում, կամ որտեղ էլ որ լինեք, պարզապես մնացեք ձեր տեղում, և այսպես տղաները կիմանան, որ դուք այստեղ եք աղոթքի քարտի համար: Իսկ հետո երեկոյան մենք կաղոթենք հիվանդների համար: Եվ եթե Տերը չփոխի մտքերս, այս երեկո ես ուզում եմ քարոզել այս թեմայով՝ *«Հորը մեզ ցո՛ւյց տուր, և դա բավական է մեզ»:*

21 Այսօրվա թեմայի համար, որ ուզում եմ կարդալ, պարզապես *կյանքի պատմությունը* սկսելու համար, գտնվում է Եբրայեցիների թղթի 13–րդ գլխում, եկե՛ք սկսենք մոտավորապես...ես կասեյի մոտավորապես 12–րդ համարից:

> *Ուստի Հիսուսն էլ, որպեսզի ժողովրդին Իր արյամբ սրբի, դարպասից դուրս չարչարվեց:*
>
> *Ուրեմն եկե՛ք Իր մոտ գնանք բանակից դուրս՝ Նրա նախատինքը կրելով:*
>
> *Որովհետև մենք այստեղ մնայուն քաղաք չունենք, այլ որոնում ենք այն, որ պիտի գա:*

22 Ահա այդպիսի տեքստ: Որովհետև, հասկանո՞ւմ եք, եթե սա կյանքի պատմություն է կամ ցանկացած ինչ–որ բան, որ վերաբերում է մարդուն, մենք դա չենք փառաբանում, մանավանդ մարդու անցյալը, եթե դա նույնքան մութ է եղել, որքան իմը: Բայց ես մտածեցի, որ եթե մենք կարդանք Սուրբ Գիրքը, Աստված կօրհնի Գրությունը: Եվ իմ միտքը հետևյալն է՝

որ *մենք այստեղ մնայուն քաղաք չունենք, այլ որոնում ենք այն, որ պիտի գա։*

23 Ես գիտեմ, որ դուք Լոս Անջելեսը շատ եք սիրում։ Եվ դուք իրավունք ունեք այն սիրելու։ Սա մեծ, գեղեցիկ քաղաք է, իր ծխամառախուղներով և էլի ինչ-որ բաներով, բայց և այնպես սա գեղեցիկ քաղաք է, կլիման հիանալի։ Բայց այս քաղաքը մնայուն լինել չի կարող, այն պետք է վերջ ունենա։

24 Ես Հռոմում կանգնել եմ (որտեղ հզոր կայսրերն են) և քաղաքները, որոնք նրանք մտածում էին, թե կառուցում են անմահության համար, և թաղված են վեց մետր խորության վրա, անգամ դրանց ավերակները գտնելը դժվար է։

25 Ես կանգնել եմ այնտեղ, որտեղ Փարավոնների հզոր թագավորություններն են եղել, և դուք ստիպված կլինեք հողը փորել՝ գտնելու համար, թե այդ հզոր փարավոններն որտեղ են իշխել։

26 Մեզ բոլորիս էլ դուր է գալիս մտածել մեր քաղաքի և մեր վայրի մասին։ Բայց հիշե՛ք՝ դա չի կարող կանգուն մնալ։

27 Երբ ես փոքրիկ երեխա էի, գնում էի մեծ թխկի ծառի մոտ։ Իմ երկրում մենք կարծր տեսակներ շատ ունեինք։ Բացի այդ, մենք ունեինք այս թխկի ծառերը, շաքարաթղկի, և ինչպես մենք անվանում ենք «կոշտ թխկի» և «փափուկ թխկի» ծառերը։ Այդ մեծ վիթխարի ծառն ամենագեղեցիկն էր։ Եվ երբ ես դաշտից գալիս էի խոտը կամ, կամ բերքը հավաքելու աշխատանքից, սիրում էի գնալ այդ մեծ ծառի մոտ, նստել դրա տակ և, և հայացքս ուղղել դեպի վեր։ Ես տեսնում էի, թե նրա մեծ, հզոր ճյուղերը ինչպես էին օրորվում քամուց, մեծ, հսկայան բունը։ Եվ ես ասում էի. «Գիտե՞ք, ես կարծում եմ, որ այս ծառը դարերով կանգուն կմնա այստեղ»։ Վերջերս հայացքս նետեցի այդ հին ծառին՝ այն ուղղակի փտել էր։

28 «Որովհետև մենք այստեղ մնայուն քաղաք չունենք»։ Ոչ, այստեղ՝ երկրի վրա, ինչին որ նայում եք, ոչ մի բան հավերժ չի տեևելու։ Այն պետք է վերջանա։ Այն ամենը, ինչ մահկանացու է հեռու է հավիտենությունից։ Այնպես որ կարևոր չէ, թե մենք մեր մայրուղիները որքան լավ ենք կառուցում, թե մենք մեր շենքերը որքան հիանալի ենք կառուցում, ամեն ինչ պիտի վերանա, որովհետև այստեղ

ոչինչ հարատև լինել չի կարող։ Միայն Անտեսանելին, ահա՛ թե ինչն է հավերժ։

29 Հիշում եմ այն տունը, որում ապրում էինք՝ դա հին, գերաններից սարքած մի խրճիթ էր, ցեխով պատած։ Ես… Գուցե շատերն երբեք չեն տեսել ցեխով պատած տուն, բայց այն ամբողջությամբ պատած էր ցեխով, և մեծ, հսկայական գերաները, ինչպես լինում են հին տներում, ես կարծում էի, որ այդ տունը դարերով կանգուն կմնա։ Բայց գիտե՞ք, այսօր այդ տան տեղ շինարարություն է ընթանում։ Այն այնքան է փոխվել։ Ամեն ինչ փոխվում է։ Բայց…

30 Եվ ես նայում էի հորս, նա բավականին կարճահասակ, ամրակազմ, շատ ուժեմ մարդ էր, իմ իմացած կարճահասակ մարդկանցից ամենաուժեղներից մեկն էր։ Ես հանդիպեցի պարոն Կուտսին, ում հետ հայրս աշխատում էր փայտամթերումներում, նա փայտահատ էր, և մոտ մեկ տարի առաջ…և պարոն Կուտսն իմ շատ լավ բարեկամներց մեկն է, և առաջին մկտրական եկեղեցում սարգավակ է, և նա ասաց. — Բիլլի՛, դու պետք է, որ շատ ուժեղ տղամարդ լինես։

— Ո՛չ, ես ամենևին էլ ուժեղ չեմ, պարոն Կուտս։

31 — Եթե հորդ նման ես, պետք է որ նրա պես ուժեղ լինես։ Ասաց. — Ես տեսնում էի՝ ինչպես 63 կիլոգրամ կշռող այդ մարդը 400 կիլոգրամ կշռող գերանը մենակ բարձում էր վագոնի մեջ։ Նա պարզապես գիտեր՝ ինչպես դա անել։ Նա ուժեղ էր։ Ես հայացքով հետևում էի, թե ինչպես էր նա ներս մտնում, որ լվացվի և պատրաստվի ճաշին, երբ մայրիկը կանչում էր նրան։

32 Բակի դիմաց մենք խնձորենու մի ծեր ծառ ունեինք, չորս թե երեք հատ փոքրիկ ծառեր ունեինք նաև տնակի հետևում։ Անմիջապես այդ ծառերի մեջտեղում ջարդված, հին, մեծ մի հայելի կար, որը մի քանի ծռած մեխերով ամրացրած էր ծառին։ Ինչպես այն, որ ձեր մեջի հյուսները կանվանեին «վերակուի կախիչներ»։ Մեխերը ծռած էին, որ հայելին պահեն իր տեղում։ Կար նաև հին, անագե սանր։ Քանի՞սն են տեսել երբևէ հին անագե…հնաոճ անագե սանր։ Այն ուղղակի աչքիս առաջ է։

33 Կար նաև լվացարանի համար փոքրիկ մի նստարան, պարզապես մի փոքրիկ տախտակ, որի տակ մի փոքր թեք ոտք էր դրված, ծառին ամրացրած։ Այնտեղ փոքրիկ, հին, կիսականաչ ջրհան կար, որով մենք ջուր էինք վեր

հանում, և մենք լվացվում էինք այդ հին ծառի մոտ: Իսկ մայրիկը վերցնում էր այյուրի պարկերը և դրանցից սրբիչներ էր պատրաստում: Որևէ մեկն երբևէ այյուրի պարկերից պատրաստված սրբիչներ օգտագործե՞լ է: Դե, ես հիմա ինձ զգում եմ ինչպես տանը: Եվ այդ մեծ, հին, կոպիտ սրբիչնե՛րը: Եվ երբ նա մեզ՝ փոքրիկներիս լողացնում էր, նա...ամեն անգամ երբ նա տրորում էր, թվում էր, թե կաշին էր քերթում: Հիշում եմ նաև այդ հին այյուրի պարկը: Նա մի քանի թելեր էր դուրս հանում, փոքրիկ փնջիկներ էր անում այն զարդարելու համար:

34 Քանի՞սն են երբևէ քնել ծղոտե ներքնակի վրա: Դե, ես կասեմ: Քանի ՞սն են իմացել երբևէ, թե ինչ է եգիպտացորենի հարդով (կճեպով) բարձը: Դե, եղբայր Գլովեր, ես հիմա իմ տան եմ, դա հաստատ է: Ծղոտե ներքնակ. վերջերս այն փոխեցի և դա...Ո՛հ, դա, դա լավ է քնելու համար, զովացնող է: Հետո ձմռանը նրանք վերցնում էին հին փետրավոր ներքնակը և դնում էին դրա վրա, գիտեք, իսկ հետո մեզ ծածկում էին բրեզենտով, որովհետև ձյունը տախտակների ճեղքերի արանքից ներս էր թափանցում, որտեղից հին տանիքի կավարներն էին բարձրանում, գիտեք, և այդ տեղից ձյունը ներս էր թափանցում: Ո՛հ, ես դա շատ լավ եմ հիշում:

35 Հայրիկը նաև սափրվելու խոզանակ ուներ: Ես... Հիմա դուք կզարմանաք: Այն պատրաստված էր եգիպտացորենի հարդով՝ եգիպտացորենի հարդով սափրվելու խոզանակ: Նա վերցնում էր մայրիկի պատրաստած հին կալաքարային օճարը, հարում էր և այդ եգիպտացորենի հարդե խոզանակով քսում էր դեմքին ու մեծ, հին ածելիով սափրվում էր: Իսկ կիրակի օրերին վերցնում էր թերթի կտորները և կպցնում էր իր օձիքի շուրջը, նրանք ցեյյուլոիդե օձիքներ էին կրում, և դրանք այնպես դնում էին, որպեսզի օճարի փրփուրը չհայտնվի վերնաշապիկի օձիքի վրա: Երբևէ տեսե՞լ եք ինչպես է դա արվում: Ո՛հ, ա՜խ, ա՜խ:

36 Հիշում եմ փոքրիկ, հին աղբյուրը, որն այնտեղ՝ ներքևում էր, որտեղ գնում էինք ջուր խմելու ու հին դդմե շերեփով ջուր հանելու: Քանի՞սն են երբևէ տեսել դդմե շերեփ: Լավ, ձեզանից քանի՞սն են Քենթուկիից: Այո՛, խնդրեմ, մի նայե՛ք այստեղ քենթուկեցիներին: Դե, ես ճիշտ ինչպես...Ես կարծում եմ, թե բոլոր ներկաներն Օհայոից և Արկանզասից են, բայց կարծես թե քենթուկեցիներն են տեղափոխվել: Մի քանի ամիս

առաջ նրանք Քենթուկիյում նավթ են գտել, գիտեք, դրա համար նրանցից ոմանք անցնում են այս ճանապարհով:

37 Հետո՝ հիշում եմ, որ երբ հայրս ներս էր մտնում և ճաշից առաջ լվացվում էր, նա իր կարճ և հաստ բազուկների վրայով ծալում էր թևքերը: Եվ երբ նա կանգ էր առնում, որ լվացվի, ջուրը շփում էի իր երեսին, այդ մկանները ուղղակի գլորվում էին: Եվ ես ասում էի. «Գիտե՞ք, իմ հայրիկը հարյուր հիսուն տարի կապրի»: Նա այնքա՜ն ուժեղ էր: Բայց նա կյանքից հեռացավ հիսուն երկու տարեկան հասակում: Տեսնո՞ւմ եք: «Մենք այստեղ մնայուն քաղաք չունենք»: Դա ճիշտ է: Մենք հավերժ չենք:

38 Այժմ եկե՛ք բոլորս միասին փոքրիկ մի զբոսանք կատարենք: Այստեղ գտնվող ձեզանից յուրաքանչյուրն ունի ինձ նման կյանքի պատմություն, և հիշողության արահետով զբոսնելը երբեմն վատ չէ: Այդպես չեք կարծո՞ւմ: Պարզապես հետ գնալ, եկե՛ք բոլորս միասին մի քիչ հետ գնանք մանկական ապրումներին:

39 Իսկ այժմ կյանքի պատմության մաս առաջինը: Ես միայն մի փոքր կշոշափեմ դա, քանի որ այն գրքում կա և ձեզանից շատերը գիրքն ունեն:

40 Ես ծնվել եմ Քենթուկիի լեռնային մի փոքրիկ խրճիթում: Նրանք ունեին մեկ սենյակ, որտեղ մենք ապրում էինք, հատակին գորգ չկար, չկար անգամ փայտ, պարզապես մերկ հատակ էր: Եվ կոճղը, կողճի սղոցած վերնամասը երեք ոտքերի վրա, դա մեր սեղան էր: Եվ բոլոր այդ փոքրիկ Բրանհամները կուտակվում էին այնտեղ, և դուրս էին գալիս փոքրիկ, հին խրճիթի առջևի կողմը և դուրս էին թափվում կարծես փոշու մեջ թաթախված օպոսումների մի խումբ, գիտեք, բոլոր այդ փոքրիկ եղբայրները: Մենք ինը հոգի էինք, և փոքրիկ մի աղջիկ, նա իրոք ծանր ժամանակ էր ունենում մի խումբ այդ տղաների մեջ: Մենք այսօր պետք է հարգենք նրան այդ օրերի համար: Նա ամենուր մեզ հետ գալ չէր կարող, մենք առաջ էինք վազում նրանից, նա աղջիկ էր: Այսպիսով, նա չէր կարող դա տանել, գիտեք: Այսպիսով, մենք ունեինք...Եվ բոլորը...

41 Հիշում եմ, սեղանի շուրջ ունեինք ընդամենը երկու աթոռ, որոնք պատրաստված էին ձողիկներից: Պարզապես ընկուզենու ջահել ճյուղերը գործված էին և դրանց ներքևի մասը երեսպատված էր ընկուզենու կեղևով: Որևէ մեկը տեսե՞լ է երբևէ ընկուզենու կեղևից աթոռ: Այո՛: Ես դեռ լսում եմ մայրիկի ձայնը: Ո՜հ, հետո,

երբ մենք փայտյա հատակ ունեցանք, նա փոքրիկներին *այսպես* գրկած, այդ հին աթորին օրորվելով ուղղակի հատակին դղրդում, դղրդում դղրդում էր: Հիշում եմ, ինչպես էր մայրիկը լվացք կամ էլի ինչ-որ բան անելիս, փոքրիկներին փակում, որ դռնից դուրս չգնան, նա աթոռը պառկեցնում էր ցած և շրջում դռան հակառակ կողմը, որ փոքրիկները դուրս չգնան, երբ պետք էր աղբյուրի մոտ գնար ջուր բերելու և այլն:

42 Երբ ես ծնվեցի մայրիկը տասնհինգ տարեկան էր, հայրրկը՝ տասնութ: Ինը զավակներից ավագը ես էի: Նրանք ինձ պատմել են, որ այն առավոտ, երբ ես ծնվեցի…

43 Մենք շատ աղքատ էինք, ուղղակի աղքատներից աղքատ: Եվ այդ փոքրիկ խրճիթում մենք անգամ պատուհան չունեինք: Դա փոքրիկ փայտյա դռնակ էր, որ բացվում էր: Չեմ կարծում այդպիսի բան երբևէ տեսած լինեք: Փոքրիկ փայտյա դուռ էր, որը բացվում էր պատուհանի փոխարեն, ցերեկները բացում էին, իսկ երեկոները փակում: Մենք այդ ժամանակ էլեկտրական լույս չունեինք անգան նավթավառ վառել չէինք կարող, ունեինք այն, ինչ դուք անվանում եք «ճարպե ճրագ»: Չգիտեմ, արդյոք դուք գիտեք, թե ճարպե ճրագն ինչ է, թե՞ ոչ: Դե, դուք ինչ եք…Իսկ գնե՞լ եք երբևէ…սոճու ճյուղերի փունջ վառե՞լ եք: Ուղղակի վերցնում եք սոճու ճյուղերի մի փունջ, վառում դնում եք կափարիչին, և նրանք վառվում են: Եվ դա…փոքր-ինչ ծուխ էր հանում, բայց, ամեն դեպքում, այնտեղ կահույք չկար, որ ծխահարվեր: Այնպես որ, դա պարզապես…խրճիթը մրոտված էր: Բայց լավ էր քաշում, այնտեղ՝ տանիքի միջով ծուխը լավ էր բարձրանում: Այնպես որ, դա…

44 Ես ծնվել եմ 1909 թվականի ապրիլի 6-ին: Իհարկե, դուք գիտեք, ես հիմա մի քիչ անց եմ քսանհինգից: Այն առավոտ, երբ ես ծնվել եմ, մայրիկն ասում էր, որ նրանք բացել էին պատուհանը: Մենք ոչ մի բժիշկ չունեինք, կար մանկաբարձուհի: Ուղղակի…Եվ այդ մակնաբարձուհին իմ պատիկն էր: Եվ այսպես, երբ ես ծնվեցի և իմ առաջին ճիչն արձակվեց, և, և մայրիկը ցանկացավ տեսնել իր երեխային: Իսկ, իսկ մայրիկը ինքն էլ գրեթե դեռ երեխա էր: Եվ երբ նրանք բացեցին այդ փոքրիկ պատուհանը, լույսը նոր էր բացվել՝ մոտ ժամը 5-ին էր: Եվ…Թփի կողքին մի շիկահավ էր նստած, ինչպես բոլորդ նրա նկարը տեսել եք իմ, իմ կյանքի պատմության գրքում: Այդ շիկահավն այնտեղ նստած՝ պարզապես ամբողջ ուժով երգում էր:

45 Ես միշտ սիրել եմ շիկահավերին: Հիմա դուք՝ տղաներ, որ լսում եք ռադիոյով, մի՛ կրակեք իմ թռչունների վրա: Հասկանո՞ւմ եք, նրանք, նրանք, նրանք...Դրանք իմ թռչուններն են: Դուք երբևէ լսե՞լ եք շիկահավի մասին լեգենդը, թե ինչպե՞ս է նրա կուրծքը կարմիր դարձել: Ես մի պահ կանգ կառնեմ այստեղ: Ինչպե՞ս է նրա կուրծքը կարմրել...Մի անգամ Թագավորների թագավորը Խաչի վրա մահանում էր, Նա տանջվում էր և ոչ ոք չգնաց Նրա մոտ: Նա չուներ Իրեն օգնող մեկը: Այնտեղ շագանակագույն փոքրիկ մի թռչուն կար, որն ուզում էր Խաչից դուրս հանել այդ մեխերը, նա շարունակում էր թռչել Խաչի վրա և ցնցել այդ մեխերը: Նա չափազանց փոքր էր այդ մեխերը քաշելու համար, և նրա փոքրիկ կուրծքն արյունից ամբողջությամբ կարմրում է: Այդ ժամանակներից ի վեր նրա կուրծքը կարմիր է դարձել: Մի՛ կրակեք նրան, տղանե՛ր: Հանգիստ թողեք նրանց:

46 Այդ թռչունը պատուհանի կողքին նստած՝ ծլվլում էր այնպես, ինչպես շիկահավերն են երգում: Եվ, և հայրիկը պատուհանը լայնորեն է բացում: Եվ երբ նրանք այդ փոքրիկ պատուհան–դուռը լայնորեն են բաց անում, մայրիկն ասում է, որ Լույնը, որ տեսնում եք նկարի վրա, պտտվելով պատուհանինց ներս է անցնում և կախվում է մահճակալի վրա: Տատիկը չգիտեր, թե ինչ ասեր:

47 Մենք...կրոնավոր ընտանիք չենք եղել: Իմ ազգականները կաթոլիկ են: Ես, թե՛ հայրական, թե՛ մայրական կողմից իռլանդացի եմ: Հայրս մաքուր իռլանդացի է՝ Բրանհամ, մայրս՝ Հարվի, միայն նրա հայրն է ամուսնացել չերոկի ցեղից մի հնդկուհու հետ, այնպես որ դա փոքր ինչ խառնել է իռլանդական արյունը: Թե՛ հայրիկը, թե՛ մայրիկը եկեղեցի չէին գնում, և նրանք եկեղեցուց դուրս էին ամուսնացել ու նրանք ընդհանրապես ոչ մի կրոն չունեին: Եվ այնտեղ՝ սարերում կաթոլիկ եկեղեցի անգամ չկար: Այնպես որ այս երկու Բրանհամները տեխափոխվեցին բնակվելու այնտեղ՝ վաղ շրջանի բնակիչների հետ, և այդպես սկսվեց Բրանհամների սերունդը՝ ընտանիքի սերունդաբանությունը:

48 Եվ այդ ժամանակ, երբ նա բացեց...Երբ նրանք այդ պատուհանը բացեցին և այդ Լույսը կանգ առավ այնտեղ, նրանք չգիտեին, թե ինչ անեն: Հայրիկը այդ իրադարձության կապակցությամբ իր համար նոր կոմբինեզոն էր գնել (մայրիկն էր պատմում): Նա

կանգնած էր...ձեռքերը հին կոմբինեզոնի կրծկալին դրած, ինչպես այդ ժամանակվա փայտահատներն ու անտառապահները: Դա վախով էր համակել նրանց:

49 Երբ լրացավ իմ տաս օրն կամ նման մի բան, նրանք ինձ տարան «Պարկամուկների Թագավորություն» կոչվող մկրտական եկեղեցին: Լավ անվանում է: Այնտեղ տարեց մի շրջիկ քարոզիչ կար, հնաոճ մկրտական մի քարոզիչ, ով գրեթե ամեն երկու ամիսը մեկ անգամ անցնում էր այդ կողմերով: ...Այնտեղ մարդիկ փոքրիկ ծառայություն էին ունենում միասին՝ մի քանի երգեր էին երգում, բայց քարոզը հնչում էր, երբ գալիս էր այդ քարոզիչը: Նրանք ամեն տարի նրան վճառում էին մի պարկ դդում և նման մի քանի բաներ, գիտեք, այն, ինչ մարդիկ աճեցնում էին՝ նրան տալու համար: Եվ այդ տարեց քարոզիչն եկավ և այնտեղ աղոթք բարձրացրեց ինձ համար՝ որպես փոքրիկ տղայի: Դա իմ առաջին այցելությունն էր եկեղեցի:

50 Մոտ երկու տարեկան հասակում...կամ մի փոքր ավելի շատ տեղի ունեցավ առաջին տեսիլքը:

51 Լավ, այնտեղ սարերում խոսում էին այդ Լույսի ներս մտելու մասին: Նրանք փորձում էին դա ինչ–որ կերպ բացատրել: Նրանցից ոմանք ասում էին, որ դա պետք է որ արևի լույսի արտացոլանքը լիներ տան հայելու մեջ: Բայց այնտեղ ոչ մի հայելի չկար, և արևը դեռ չէր ծագել, չափազանց վաղ էր, ժամը 5–ին էր: Իսկ հետո, ո՛հ, նրանք պարզապես բացառում էին Դա: Եվ երբ ես մոտ...կարծեմ մոտ երեք տարեկան էի...

52 Այժմ ես պետք է անկեղծ լինեմ: Այստեղ կան բաներ, որ չէի ուզենա ասել, և կցանկանայի շրջանցել և չասել դրանք: Բայց ինչպես էլ որ լինի, եթե ճիշտ ես խոսում, պետք է ճիշտն ասես, լինի դա քո, թե քո հարազատների մասին: Անկեղծ լինել այդ հարցում, և այդպես ամեն անգամ:

53 Հայրս հեռու էր կրոնավոր լինելուց: Նա տիպիկ լեռնեցի տղա էր, ով շարունակ, անընդատ խմում էր: Մարերում կերուխումներից մեկի ժամանակ կռվում նա անախորժությունների մեջ էր ընկել, կռվում, որի ժամանակ երկու թե երեք հոգի քիչ էր մնում սպանեին, կրակեին, դանակներով փրթեին իրար: Հայրիկն այդ կռվի հրահրողներից մեկն էր, որովհետև այդ կերուխումի ժամանակ վիրավորել էին նրա ընկերոջը, և վերջինս աթոռով հարվածել էր մեկին: Եվ...Իսկ այդ մարդը դանակ էր հանել և պատրաստվում էր մորթել հատակին ընկած

հայրիկի ընկերոջը՝ դանակը սիրտը խրելով, և հայրիկը խառնվել էր այն կռվին: Դա պետք է որ սարսափելի կռիվ եղած լիներ, որովհետև նրանք Բուրսվիլից՝ բազում մղոններ հեռվից, շերիֆին ուղարկել էին հայրիկիս հետևից, ձիով ողջ ճանապարհին:

54 Եվ այսպես, այդ մարդը գտնվում էր մահվան շեմին: Գուցե նրա հարազատներից ոմանք լսում են սա: Ես պատրաստվում եմ տալ նրա անունը: Նրա անունը Ուիլլ Յարբրոուգ էր: Նրանք հնարավոր է, որ...Կարծեմ նրանցից ոմանք՝ իր որդիներից Կալիֆոռնիայում են: Բայց նա կռվարար, մեծ ուժի տեր մարդ էր, իր սեփական որդուն սպանել էր ցանկապատի ցիցով: Նա, նա շատ ուժեղ և չար մարդ էր; Եվ այսպես նրա և իմ հոր միջև մեծ դանակակռիվ եղավ: Հայրս քիչ էր մնում սպաներ այդ մարդուն, դրա համար նա ստիպված եղավ փախչել ու լքել Քենթուկին և գետը հատելով անցնել Ինդիանա:

55 Հայրս մի եղբար ուներ, ով այդ ժամանակ ապրու էր Լուիսվիլում՝ Քենթուկի նահանգում, վերջինս Լուիզիանայի՝ Քենթուկի նահանգի «Wood Mosaic Saw Mills» սուպերմարկետի կառավարչի օգնական էր: Եվ այսպես, նա գնաց իր ավագ եղբորը փնտրելու: Հայրիկը տղաներից՝ տասնյոթ զավակներից, ամենափոքրն էր: Եվ այսպես, նա գնաց իր ավագ եղբորը փնտրելու և գրեթե մեկ տարով անհետացավ: Նա չէր կարող վերադառնալ, որովհետև հետախուզման մեջ էր: Դրանից հետո մենք նամակով լուր ստացանք նրանից ուրիշի անվամբ ստորագրված, որում նա ասում էր մայրիկին, թե ինչպես էր կապ պահելու նրա հետ:

56 Հիշում եմ՝ ինչպես մի օր աղբյուրի մոտ, որն անմիջապես տնակի (այդ փոքիկ խրճիթի) հետևում էր գտնվում: Եվ, և այդ ընթացքում, այն բանից հետո... ինը...իմ և ինձ հաջորդող եղբոր միջև տարիքային տարբերությունը տասնմեկ ամիս է, և նա դեռ չոչ էր անում: Ես մի մեծ քար ունեի իմ ձեռքում և փորձում էի նրան ցույց տալ, թե ինչքան ուժգին կարող եմ այդ քարը շպրտել ցեղի մեջ, որտեղ աղբյուրը հեղեղվելով հողը վերածել էր ցեխոտ ճահճի: Ականջիս թռչունի ձայն հասավ, այն ծառի վրա նստած՝ երգում էր: Ես նայեցի վեր՝ այդ ծառին, այդ թռչունը թռավ, գնաց, և երբ այն թռավ, մի Ձայն խոսեց ինձ հետ:

57 Գիտեմ, դուք մտածում եք, թե ես չէի կարող մտածել և հիշել դա: Բայց Տեր Աստվածը, Ով երկնքի և երկրի և

գոյություն ունեցող ամեն ինչի Դատավորն է գիտի, որ ես ճիշտն են ասում:

58 Այդ շիկահավն երբ թռավ, գնաց, այնտեղից, որտեղ հենց նոր նստած էր այդ թռչունը, տերևների խշխշոցի նման մի Ձայն հնչեց, Որն ասաց. «Դուք կապրեք Նյու Օլբանի անունով քաղաքից ոչ հեռու»: Եվ երեք տարեկանից մինչև այսօր էլ ես ապրում եմ Ինդիանա նահանգի Նյու Օլբանի քաղաքից երեք մղոն հեռավորության վրա:

59 Ես գնացի և այդ մասին պատմեցի մայրիկին, բայց նա մտածեց, թե ես պարզապես երազ կամ նման մի բան եմ տեսել:

60 Հետո մենք տեղափոխվեցինք Ինդիանա և հայրիկն աշխատանքի անցավ հարուստ միսթր Ուոթենի մոտ: Նա «Ուոթեն Դիստիլլերիս» ձեռնարկության տերն է, և մեծ բաժնետոմսերի տերը, մուլտիմիլիոնատեր է, «Լուիսվիլ Քենըլ» ի և, և բեյսբոլի և այլնի տերն է: Այդ ժամանակ մենք ապրում էինք մոտակայքում: Հայրիկը լինելով աղքատ, բայց և այնպես առանց խմիչքի չէր կարողանում, դրա համար նա, նա սկսեց վիսկի պատրաստել թորման միջոցով:

61 Այդ ժամանակ ծանր բեռը ընկավ իմ ուսերին, որովհետև ավագ երեխան ես էի: Ես ստիպված էի գնալ և ջուր կրել այդ թորամանի համար՝ գալարուկները սառեցնելու համար, մինչ նրանք վիսկի էին պատրաստում: Հետո նա վաճառեց դա, և այդպիսի երկու թե երեք թորամաններ գնեց: Հիմա դա այն մասն է, որն ես չեմ սիրում պատմել, բայց դա ճշմարտություն է:

62 Հիշում եմ, թե ինչպես մի օր ախոռից տուն գալիս, լաց էի լինում, որովհետև այդ վայրի հետևում մի լիճ կար, այն…որտեղ նրանք սառույց էին ջարդում: Ձեզանից շատերը հիշում են, երբ սառույցը ջարդում և դարսում էին թեփի մեջ: Պարոն Ուոթենն այդպես էր սառույցը պահպանում այդ շրջանում: Իսկ հայրիկը նրա վարորդն էր՝ անձնական վարորդը: Եվ երբ…այդ լիճը լիքն էր ձկներով, և երբ նրանք գնում էին, որ սառույց ջարդեն բերեն, և այն շարում էին թեփի մեջ, և երբ ամռանը սառույցը հալում էր, կարծում եմ այն բավականին մաքուր էր, սառցե լճակի նման, նրանք դա օգտագործում էին, ոչ թե խմելու, այլ ջուրը սառը պահպանելու համար, շարում էին իրեց դուլլերի և կաթի շուրջ և այլն:

63 Եվ մի օր ջուր էի կրում այդ ջրհորից, որը մի թաղամասի հեռավորության վրա էր. քթիս տակ փնփթում էի նայելով նրանց, ովքեր ստիպված չէին այդ գործն անել, որովհետև ես դպրոցից էի գալիս, իսկ բոլոր տղաները գնում էին լիճ ձուկ որսալու: Ես սիրում էի ձուկ որսալ: Եվ այսպես, նրանք բոլորը, բացի ինձնից, գնում էին ձուկ որսալու, իսկ ես այդ թորամանի համար պետք է ջուր քարշ տայի: Իհարկե, վա՛յ, այդ մասին ոչ մի խոսք, որովհետև դա արգելված էր: Եվ ես...Դա այդքան ծանր էր: Եվ հիշում եմ, թե ինչպես էի վնասված բութ մատով քայլում՝ եգիպտացորենի հասկը բութ մատիս տակ կապած, որ ցեխի մեջ չկեղտոտվեր: Այդպիսի բան արե՞լ եք երբևէ: Պարզապես եգիպտացորենի հասկը թելով *այդպես* փաթաթում ես բութ մատիդ տակ: Այն մատը կրեաի գլուխի նման ուղիղ՝ վեր է պահում, գիտեք: Ուր էլ, որ ես գնայի այդ եգիպտացորենի ցողունը բութ մատիս տակ փաթաթած, կկարողանաիք ինձ գտնել, ուր էլ մատս քարշ տալով գնայի, հասկանում եք: Ես կոշիկ չունեի, որ հագնեմ: Այսպիսով, մենք երբեք կոշիկներ չէինք հագնում, երբեմն ձմեռվա կեսն էին հագնում: Եթե հագնում էլ էինք, մենք...ապա դա այն, ինչ մեզ օգնություն էին տալիս՝ ինչ-որ մեկը տալիս էր մեզ: Հագուստն էլ, որն ինչ-որ մեկը բարեգթությամբ տալիս էր մեզ:

64 Եվ ես կանգ առա այդ ծառի տակ, նստեցի այնտեղ, հեկեկում էի (դա սեպտեմբերին էր), որովհետև ուզում էի գնալ ձուկ բռնելու, ես պետք է մի քանի տակառիկ ջուր քարշ տայի, փոքրիկ դույլերով, մոտ *այդ* բարձրության՝ երկու լիտրանոց, որովհետև ես ընդամենը յոթ տարեկան փոքրիկ տղա էի: Եվ ես դրանք լցնում էի մեծ տակառի մեջ, իսկ հետո նորից գնում ևս երկու դույլ էի բերում, նորից գնում էի ջուր էի քաշում: Ահա այդպես էր մեր ջուրը: Եվ նրանք՝ այդ մարդն ու հայրիկը այդ գիշեր հավաքվել էին այդ տանը եգիպտացորենի օղի քաշելու:

65 Ես լաց էի լինում, հանկարծ լսեցի, որ ինչ-որ բան պտտահողմի նման ձայն է հանում, դրա նման մի բան (հուսով եմ հիմա դա չափազանց բարձր չի հնչելու), «Խ-2-2-2-2, խ-2-2-2-2», ուղղակի այդպիսի մի ձայն էր: Ահավոր լռություն էր տիրում և ես նայեցի չորս կողմը: Եվ գիտե՞ք ինչ, թույլ մրիկ էր, եթե չեմ սխալվում, դուք դրանց փոքրիկ պտտահողմեր եք ասո՞ւմ: Աշնանը դրանք սլանում եմ եգիպտացորենի արտերով, գիտեք, քշում տանում տերևները և այլն, և աշնանը տերևներն այնտեղ

դեռ նոր էին սկսել դեղնել: Եվ ես մի հսկայական սպիտակ բարդու ծառի տակ էի, որը կանգնած էր ախոռի և տան միջև մոտ կես ճանապարհի հեռավորության վրա: Եվ ես լսեցի այդ ձայնը: Ես նայեցի շուրջը, բայց այնտեղ նույնքան լուռ էր, ինչպես որ այս սենյակում է: Ոչ մի տեղ տերևները չէին շարժվում, ոչ մի նման բան: Եվ ես մտածեցի. «Որտեղի՞ց է այդ ձայնը գալիս»: «Պետք է որ հեռավոր տեղից՝ այստեղից լինի»,— մտածում էի ես: Ընդամենը երեխա էի: Եվ այն գնալով ավելի ու ավելի էր սաստկանում:

66 Ես բարձրացրի իմ փոքրիկ դույլերը, և՛ս մի երկու անգամ հեկեկացի և սկսեցի արահետով բարձրանալ, հանգստանում էի: Հազիվ էի մի քանի քայլ արել այդ հսկայական ծառի ճյուղերի տակից, և, օ՛հ, հողմապտույտի ձայն եղավ: Ես շուռ եկա, որ նայեմ, և այդ ծառի մոտ մեջտեղում հողմ էր պտտվում, պտտվում էր այդ ծառի շուրջը, շարժելով նրա տերևները: Ես մտածեցի, որ ոչ մի տարօրինակ բան չկա, քանի որ տարվա այդ եղանակին՝ աշնանը այդ պտտահողմերը բնական երևույթ էին: Փոքրիկ...Մենք դրանց «պտտահողմեր» ենք ասում: Եվ նրանք, նրանք փոշի են բարձրացնում: Տեսել եք դրանք անապատում: Նույն բանն է: Եվ այսպես, ես նայում էի, բայց այն չէր հեռանում: Դա սովորաբար ընդամենը մի պահ է պոռթքում, հետո անհետանում է, բայց այն երկու րոպեից կամ ավելի, ինչ այնտեղ էր:

67 Ես նորից սկսեցի բարձրանալ արահետով: Ես շուռ եկա և՛ս մեկ անգամ դրան նայելու: Եվ երբ Դա եղավ, մարդկային մի Ձայն, նույնքան պարզ և լսելի, ինչպես իմն է հիմա՝ ասաց. «Երբեք մի՛ խմիր, մի՛ ծխիր և մի՛ պղծիր քո մարմինը ոչ մի ձևով: Երբ մեծանաս, քեզ համար աշխատանք կլինի»: Ես մահու չափ վախեցել էի: Կարո՞ղ եք պատկերացնել, թե այդ փոքրիկ տղան ինչպես իրեն զգաց: Ես այդ դույլերը գցեցի, և ամբողջ ուժով ճչալով, որքնան հնարավոր է արագ վազեցի տուն:

68 Այդ վայրերում պղնձագլուխ օձեր կային, և նրանք շատ թունավոր էին: Մայրիկը մտածեց, որ այգու մոտով անցելիս, գուցե ոտքս դրել եմ պղնձագլուխ օձի վրա, և նա վազեց ինձ ընդառաջ: Ես ճչալով նետվեցի նրա գիրկը, փաթաթվելով և համբուրելով նրան: — Ի՞նչ է պատահել: Օձն է քեզ կծե՞լ,— հարցրեց նա: Նա ինձ ամբողջությամբ զննեց:

— Ո՛չ, մայրիկ,— ասացի ես: — Այնտեղ՝ այն ծառի վրա

մարդ կա։

69 — Ա՜խ, Բիլլի, Բիլլի։ Այ, չարաճճի,— ասաց նա։ — Միգուցե վերջ տաս և գնաս քնելո՞ւ։

70 — Ո՛չ, մայրիկ։— Այն ծառի վրա մարդ կա, և Նա ասաց ինձ՝ չիմեմ և չծիխեմ։

71 «Չիմել վիսկի և դրա նման բաներ»։ Իսկ ես հենց այն ժամանակ ջուր էի տանում օղի քաշելու սարքի համար։ Եվ Այդ Ձայնն ասաց. «Երբեք մի՛ խմիր և մի՛ պղծիր քո մարմինը ոչ մի ձևով»։ Դա անբարոյականություն է, գիտեք, և իմ երեխան...երիտասարդ տղամարդիկ կանանց հետ։ Եվ լավ է, որ ես երբեք նման բանում մեղավոր չեմ եղել։ Տերն օգնել է ինձ դրանում, և շարունակության մեջ դուք դա կտեսնեք։ Եվ այսպես՝ «Մի՛ խմիր, մի՛ ծխիր և մի՛ պղծիր քո մարմինը, որովհետև երբ մեծանաս քեզ համար աշխատանք կլինի»։

72 Ես պատմեցի մայրիկին դրա մասին, բայց, բայց նա պարզապես ծիծաղեց ինձ վրա։ Ես ուղղակի հիստերիայի մեջ էի։ Նա բժիշկ կանչեց, և վերջինս ասաց. «Նա պարզապես նյարդայնացել է և վերջ»։ Մայրիկը ինձ անկողին պառկեցրեց։ Եվ այդ օրվանից ի վեր ես երբեք այդ ծառի կողքով չէի անցնում։ Վախը պատել էր ինձ։ Ախոռ այգու մյուս կողմից էի գնում, որովհետև մտածում էի, թե այդ ծառի վրա մարդ կար և Նա խոսում էր ինձ հետ, այդ հզոր, խորը Ձայնը, որ խոսեց։

73 Այնուհետև դրանից մոտ մեկ ամիս անց, ես փոքրիկ եղբարներիս հետ գլաններով բակում խաղում էի։ Եվ հանկարծ ինձ համակեց տարօրինակ մի զգացում։ Ես կանգ առա և նստեցի մի ծառի կողքին։ Մենք հենց Օհայո գետի ափին էինք։ Ես նայեցի դեպի Ջեֆերսոնվիլը և տեսա, թե ինչպես մի կամուրջ գետի վրայով բարձրացավ։ Տեսա նաև, ինչպես տասնվեց տղամարդ (ես հաշվեցի նրանց), այնտեղից ընկան և իրենց կյանքը կորցրեցին այդ կամուրջի վրա։ Ես արագ վազեցի և մայրիկին պատմեցի դրա մասին, բայց նա մտածեց, թե ես երազ եմ տեսել։ Սակայն նրանք այդ ամենը պահում էին իրենց մտքում։ Եվ դրանից քսաներկու տարի անց այժմ Մունիցիպալ կամուրջը (որի վրայով ձեզանից շատերն են անցնում, երբ գնում են այնտեղ) նույն տեղում ձգվում է գետի վրայով, և գետի վրա այդ կամուրջը կառուցելիս տասնվեց հոգի կորցրեցին իրենց կյանքը։

74 Դա երբեք չի վրիպել կատարյալ ճշմատրություն

լինելուց: Ինչպես դուք տեսնում եք Դա այստեղ՝ լսարանում: Դա միշտ այդպես է եղել:

75 Նրանք կարծում էին, թե ես ուղղակի նյարդային եմ: Իհարկե, ես նյարդային մարդ եմ, ճիշտ է: Եթե նկատել եք, մարդիկ, ովքեր հակված են հոգևորության, նյարդային են:

76 Նայե՛ք բանաստեղծներին և մարգարեներին: Եվ նայե՛ք Վիլյամ Կուպերին, ով գրել է այս հայտնի երգը՝ «Մի շատրվան կա արյունով լեցուն, Էմմանուելի երակներից քաշված»: Դուք երբևէ...Դուք գիտեք այս երգը: Վերջերս կանգած էի նրա շիրիմի կողքին: Եղբայր Ջուլիուսը կարծեմ...ես չգիտեմ, ոչ...այո, ճիշտ է, մեզ հետ էր այնտեղ՝ նրա գերեզմանին: Եվ, և այնտեղ...այս երգը գրելուց հետո ներշնչանքը թողեց նրան և վերջինս գետ էր փնտրում ինքնասպանություն կատարելու համար: Տեսնո՞ւմ եք, Հոգին լքել էր նրան: Եվ բանաստեղծների և հեղինակների նման մարդիկ և...ավելի ճիշտ, ոչ...ես նկատի ունեմ մարգարեներին:

77 Նայե՛ք Եղիային, երբ նա կանգնեց լեռան վրա և Աստծուց խնդրեց, որ երկնքից կրակ ու անձրև ուղարկի: Այնուհետև, երբ Հոգին հեռացավ նրանից, նա փախավ ինչ–որ մի կնոջ սպառնալիքի պատճառով: Քառասուն օր անց Աստված գտավ նրան քարանձավի մեջ թաքնված:

78 Նայե՛ք Հովնանին. բավականին ներշնչված, երբ Տերն օծեց նրան Նինվե քաղաքում քարոզելու համար, մինչև որ Սենթ Լուիսի չափ եղած քաղաքը քուրձը հագած ապաշխարեց: Իսկ հետո, երբ Հոգին լքեց նրան, ի՞նչ կատարվեց նրա հետ: Այն բանից հետո, երբ Հոգին լքեց նրան, մենք տեսնում ենք նրան սարի վրա Աստծուն խնդրելիս, որ Նա իր կյանքը վեր առնի: Եվ, տեսնում եք, դա ոգեշնչում է: Եվ երբ այս բաները լինում են դա, դա ինչ–որ մի բան է անում քեզ հետ:

79 Հետո ես նաև հիշում եմ: Ես արդեն պատանի տղա էի: (Հաջորդ մասից ես մի փոքր կարագացնեմ): Երբ արդեն պատանի տղա էի, ես էլ բոլոր երիտասարդների նման մտքեր ունեի: Ես...դպրոց էի գնում, այնտեղ տեսնում էի այդ աղջիկներին; Դուք գիտեք, ես շատ ամաչկոտ էի, գիտեք: Վերջապես ես, ես գտա մի ընկերուհի ինձ համար, ինչպես բոլոր տասնհինգ տարեկան փոքրիկ տղաները, ենթադրում եմ: Եվ, և, ո՛հ, նա գեղեցիկ էր: Աչքերը նման էին աղավնյակների, ատամները՝ մարգարիտի, իսկ վիզը կարապի նման էր, և նա, նա իրոք գեղեցիկ էր:

80 Իսկ մյուս տղան, նա…մենք ընկերներ էինք: Այսպիսով նա վերցրեց իր հոր հին «Տ» մոդելի «Ֆորդը», և մենք ժամադրություն նշանակեցինք մեր աղջիկներին: Մենք մտադիր էինք նրանց հետ գնալ շրջելու: Մենք բավական գումար ունեինք երկու գալոն բենզին գնելու համար: Մենք պիտի դոմկրատով բարձրացնեինք հետևի անիվը շարժիչը բռնակով գործարկելու համար: Ես չգիտեմ, արդյոք դուք հիշում եք դա, թե շարժիչը բռնակով ինչպես էին գործարկում: Բայց մենք, մենք բավականին լավ շրջեցինք:

81 Իմ գրպանում ես մի քանի ցենտ ունեի, և մենք կանգ առանք մի փոքրիկ տեղում և գնեցինք…մի ցենտով կարելի էր խոզապուխտով սենդվիչ գնել: Եվ այսպիսով, ո՛հ, ես հարուստ էի, քանի որ կարողացա չորս սենդվիչ գնել: Հասկանո՞ւմ եք: Սենդվիչներն ուտելուց և կոկա–կոլա խմենուց հետո ես շշերը տարա խանութ հանձնելու: Ի զարմանս ինձ, երբ ես դուրս եկա, (կանայք հենց այդ ժամանակ էին սկսել շեղվել ճիշտ ուղուց՝ կանացիությունից), իմ աղավնյակը սիգարետ էր ծխում:

82 Ես միշտ իմ կարծիքն եմ ունեցել ծխող կանանց մասին, և այդ ժամանակից այն ամենևին էլ չի փոխվել: Դա ճիշտ է: Դա ամենաստոր բանն է, որը նա կարող է անել: Եվ դա միանգամայն ճիշտ է: Եվ ես, ես մտածում էի, որ…Ծխախոտ արտադրող ընկերությունները զայրանալու են ինձ վրա սրա համար, բայց ես ձեզ եմ ասում, դա ուղղակի սատանայական հնարք է: Դա ամենամեծ մարդասպանն ու դիվերսիան է, որ այս ազգն ունի: Ես կնախընտրեի իմ տղան հարբեցող լիներ, քան ծխող: Դա ճշմարտություն է: Ես կնախընտրեի իմ կնոջը հարբաց հատակին պառկած տեսնել, քան ծխախոտով: Ահա, թե ինչպես…

83 Եվ այսպես, Աստծո Հոգին, որ իմ մեջ է, եթե դա Աստծո Հոգին է (ինչպես դուք միգուցե հարցնում եք), դուք՝ ծխող մարդիկ, երբ հայտնվում եք այնտեղ համարյա շանս չունեք, որովհետև դա ուղղակի…ամեն անգամ: Դուք նկատել եք, թե ինչպես է Նա բեմահարթակի վրա հանդիմանում դրան: Դա սարսափելի բան է: Հեռու մնացեք դրանից, օրիորդնե՛ր: Եթե դուք դրանում մեղավոր եք, խնդրում եմ Քրիստոսի Անունով թողեք դա: Դա կկոտրի ձեզ: Կսպանի ձեզ: Դա…դա վագոններով քաղցկեղ է:

84 Բժիշկները փորձում են զգուշացնել ձեզ: Բացի այդ, ինչպե՞ս նրանք կարող են վաճառել դա ձեզ: Եթե դուք

գնաք ծխախոտի խանութ և ասեք. «Գնում եմ…ես ուզում եմ 50 ցենտի քաղցկեղ գնել»: Նրանք այդ խանութը կփակեին: Բայց երբ դուք 50 ցենտի ծխախոտներ եք գնում՝ նույն բանն եք գնում: Բժիշկներն են այդպես ասում: Ո՛հ, այս փողամոլ ազգը: Դա չափազանց վատ է: Այն «մարդասպան» է: Դա ապացուցված է:

85 Երբ տեսա՝ ինչպես է այդ գեղեցիկ աղջնակը սիգարերտը ձեռքին իրեն պահում որպես գործնական տիկին, դա քիչ էր մնում սպաներ ինձ, որովհետև ես իրոք մտածում էի, թե սիրում եմ նրան: Եվ ես մտածեցի. «Ինչ արած…»:

86 Եվ այսպես, ինձ «կնատյալ» էին կոչում, գիտեք դա, որովհետև ես միշտ մի տեսակ դեմ եմ կանանց, բայց ոչ ձեզ՝ Քույրերի դեմ: Ես ընդամենը ժամանակակից կանանց վարվելակերպի դեմ եմ: Դա ճիշտ է: Լավ կանայք պետք է հեռու մնան դրանից:

87 Բայց ես հիշում եմ, երբ հայրս աշխատացնում էր այդ թորամանը, ես ստիպված էի գնալ ջրի հետևից և այլն, տեսնում էի դեռ տասնյոթ, տասնութ տարեկանն էլ չլրացած երիտասարդ օրիորդների իմ տարիքի տղամարդկանց հետ, հարբած: Եվ նրանք ստիպված էին սթափեցնել և սև սուրճ տալ նրանց, երբ վերջիններս գնում էին տուն իրենց ամուսիներին ընթրիկ պատրաստելու: Ահա այդպիսի բաներ: Ես ասացի. «Ես…»: Սա իմ դիտողությունն էր այդ ժամանակ. «Նրանք արժանի չեն գնդակահարվելու լավ, մաքուր փամփուշտով»: Դա ճիշտ է: Եվ ես ատում էի կանանց: Դա ճիշտ է: Եվ ես հիմա պետք է զգույշ լինեմ, որ այդպես չմտածեմ:

88 Բայց լավ կինը թանկարժեք քար է իր ամուսնու պսակի մեջ: Նրան պետք է հարգել: Նա…Իմ մայրիկը կին է, կինս՝ կին է, և նրանք շատ հաճելի են: Ես հազարավոր քրիստոնյա քույրիկներ ունեմ, որոնց ես շատ եմ հարգում: Բայց եթե, եթե նրանք հարգում են այն, ինչ Աստված արել է նրանց՝ մայրություն և իսկական թագուհիներ, լավ է: Լավագույն բանը, որ մարդուն կարող էր տրվել Աստծո կողմից, կինն էր: Բացառությամբ փրկությանը, կինը լավագույն բանն է, եթե լավ կին է: Բայց եթե այդպիսին չէ, Սողոմոնն ասում է. «Առաքինի կինն իր ամուսնու համար պսակ է, իսկ նախատինք բերողը կամ վատ կինը նրա ոսկորներում փտության նման է»: Եվ դա ճիշտ է: Դա ամենավատ բան է, որը կարող է պատահել:

Այսպիսով լավ կինը…Եթե դուք լավ կին ունեք, եղբա՛յր, դուք պետք է ամենաբարձր ձևով հարգեք նրան։ Ճիշտ է, դու պետք է հարգես։ Իսկակա՞ն կինը։ Եվ երեխանե՛ր, եթե դուք իսկական մայրիկ ունեք, ով մնում է տանը և փորձում է հոգ տանել ձեր համար, մաքուր է պահում ձեր հագուստը, ձեզ դպրոց է ուղարկում և սովորեցնում է Հիսուսի մասին, դուք նման քաղցր, տարեց մորը պետք է ձեր ողջ էությամբ հարգեք։ Դու պետք է հարգես այդ կնոջը, այո՛, պարոն, որովհետև նա իսկական մայր է։

89 Նրանք խոսում են անգրագիտության մասին Կենթուկիի սարերում։ Դուք տեսնում եք դա այս անհեթեթության մեջ։ Այդ տարիքավոր մայրերից ոմանք կարող են գալ այստեղ՝ Հոլիվուդ և դաս տալ ձեզ՝ ժամանակակից կանանց, թե ինչպես դաստիարակեք ձեր երեխաներին։ Դուք թույլ եք տալիս ձեր երեխային երեկոյան գզգզված մազերով դուրս գալ, և շրթունքները…տակի շրջազգեստով (ինչպե՞ս եք դուք դա կոչում), դեմքը շպարված, և շորը ամբողջությամբ մի կողմի վրա ձգաց և ամբողջ գիշերը դրսում, հարբաց, եղբա՛յր, եթե լավ ծեծ տային ընկուզենու ճյուղով, նա այլևս երբեք դուրս չէր գնա։ Ասում եմ քեզ, նա…Եվ եթե մի քիչ ավելի շատ լիներ, ավելի լավ Հոլիվուդ և ավելի լավ ժողովուրդ կունենայիք այստեղ։ Դա այդպես է։ Դա ճշմարտություն է։ «Պարզապես աշխատիր ժամանակակից լինել»,— դա, դա սատանայի հնարքներից մեկն է։

90 Եվ այսպես, այդ փոքրիկ աղջիկը, երբ նայեցի նրան, սրտիցս ուղղակի արյուն կաթաց։ Եվ ես մտաեծեցի. «Խե՜ղճ աղջիկ…»։

— Ախ, դու երևի սիգարետ ես ուզո՞ւմ, Բիլլի՛,— ասաց նա։

— Ոչ, տիկին,— ասացի ես։ — Ես չեմ ծխում։

91 Նա ասաց. — Սկզբից դու ասացիր, որ չես պարում։ Նրանք ուզում էին գնալ պարի, իսկ ես չգնացի։ Նրանք ասացին որ այնտեղ՝ «Սոսիների այգիներ» կոչվող վարյում պարեր կան։

— Ոչ, ես չեմ պարում,— ասացի ես։

92 — Դու ո՛չ պարում, ո՛չ ծխում, ո՛չ էլ խմում ես։ Այդ դեպքում ինչպե՞ս ես զվարճանում,— ասաց նա։

93 — Դե՛, ես սիրում եմ ձկնորսություն և որսորդություն։ Դա նրան չէր հետաքրքրում։

— Վերցրո՛ւ այս ծխախոտը,— ասաց նա։

— Ո՛չ, տիկին, շնորհակալություն,— ասացի ես։— Ես չեմ ծխում։

94 Եվ ես կանգնած էի մեքենայի պաշտպանիչի վրա։ Հին «ֆորդերի» վրա այդպիսի ոտնատեղեր կային, հիշո՞ւմ եք, և ես կանգնած էի այդ ոտնատեղի վրա, այդ աղջկա հետ հետևի նստարանին նստած։ — Ուզում ես ասել, որ ծխախոտ չես ծխելո՞ւ,— ասաց նա։— Եվ մենք՝ աղջիկներս ավելի շատ տղամարդկություն ունենք, քան դուք։

— Ոչ, տիկին,— ասացի,— ես չեմ կարծում, որ ուզում եմ դա անել։

95 — Դու պարզապես մեծ փափկասուն ես,— ասաց նա։ Ո՛հ, Աստված իմ։ Ես ուզում էի լինել մեծ, խիստ Բիլլ, առանց փափկասունության։ Հասկանո՞ւմ եք, ես ուզում էի համար մեկ կռիվ անողը դառնալ, այդպիսին էր կյանքի մասին իմ պատկերացումը։ Այնպես որ, ես ասացի… «Փափկասո՛ւն, փափկասո՛ւն»։

96 Ես դա չկարողացա հանդուրժել, դրա համար ասացի. «Ապա ծխախոտն ինձ տուր»։ Ձեռքս պարզեցի, մտքումս ասում էի. «Հիմա ցույց կտամ նրան, ես փափկասո՞ւն եմ, թե՞ ոչ»։ Ես սիգարետը հանեցի և սկսեցի լուցքին վառել։ Գիտեմ, դուք…Ես հիմա պատասխանատու չեմ այն բանի համար, ինչ դուք մտածելու եք, ես միայն պատասխանատու եմ ճշմարտությունն ասելու համար։ Երբ ես սկսեցի այդ ծխախոտը վառել, մտադրվելով ծխել նույնքան հստակ, որքան վերցնում եմ այս Աստվածաշունչը, հասկանո՞ւմ եք, լսեցի, թե ինչպես ինչ-որ մի բան՝ «Խշշ-շ-շ-շ-շ»-աց։ Ես նորից փորձեցի, բայց չկարողացա այն մոտեցնել բերանիս։ Ես լաց եղա և սիգարետը դեն գցեցի։ Նրանք սկսեցին ծիծաղել ինձ վրա։ Եվ ես դաշտի միջով գնացի տուն, նստեցի այնտեղ և լաց էի լինում։ Դա սարսափելի կյանք էր։

97 Հիշում եմ մի անգամ հայրիկը տղաների հետ միասին գետն էր իջում։ Մենք՝ ես ու եղբայրս պիտի նավակը վերցնեինք և վեր ու վար անեինք՝ շշեր որսալով վիսկին դրանց մեջ լցնելու համար։ Մի դյուժինի համար ստանում էինք հինգ ցենտ՝ դրանք գետի երկայնքով հավաքելու համար։ Հայրիկը ինձ հետ էր, և նա ուներ փոքրիկ տափակ այդ…Եթե չեմ սխալվում դրանք մոտ մեկ բաժակի չափով շշերն էին։ Այնտեղ փոթորկից մի ծառ էր վայր ընկել, և հայրիկը…Եվ այդ մարդը՝ պարոն Դորնբուշը նրա հետ

էր: Իմ մոտ էր...Նա լավ նավակ ուներ, և ես ուզում էի հաջեցնել նրան, որովհետև ուզում էի այդ նավակը օգտագործել: Այն լավ ղեկ ուներ, իսկ իմը ղեկ չուներ: Մենք ուղղակի թիավարում էինք հին տախտակներով: Եվ եթե նա ինձ թույլ տար օգտագործել այդ նավակը...Այսպիսով, նա զոդող էր և ինքն էր հայրիկի համար թորամաններ պատրաստել: Եվ այսպես, նա...Նրանք իրենց ոտքերը գցել էին այդ ծառի վրայով, և հայրիկը ձեռքը տարավ հետևի գրպանը և վիսկիի փոքրիկ տափակ շիշ հանեց, տվեց այն պարոն Դորնբուշին, և վերջինս մի կում անելով, վերադաձրեց այն հայրիկին, նա էլ մի կում արեց և դրեց այն ծառի բնի կողքը: Պարոն Դորնբուշը վերցրեց շիշը, ասաց. «Առ, Բիլլի, կում արա»:

— Շնորհակալություն, ես չեմ խմում:

98 — Բրանհամ ես և չե՞ս խմում,— ասաց նա: Գրեթե բոլորը մահացել էին ոչ բնական մահով: — Բրանհամ ես և չե՞ս խմում,— ասաց նա:

— Ո՛չ, պարոն:

— Ոչ,— ասաց հայրիկը,— ես փափկասուն եմ մեծացրել:

99 Հայրիկը ինձ փափկասուն էր անվանում: Ես ասացի. «Տվե՛ք ինձ այդ շիշը»: Ես շիշը բացեցի, վճռականորեն որոշել էի խմել նրանից, և երբ սկսեցի բարձրացնել այն վերև՝ «Խշ-շ-շ-շ -շ»: Ես շիշի հետ փոխանցեցի և որքան ուժ ունեի վազեցի դաշտի միջով՝ հեկեկալով: Ինչ-որ Բան թույլ չէր տալիս ինձ այդ բանն անելու: Հասկանո՞ւմ եք: Ես չէի ասի, որ ես լավն էի, (ես վճռել էի անել դա), բայց դա Աստված էր, շնորհը՝ զարմանալի շնորրը, որ ինձ հետ էր պահում այդ բաներն անելուց: Ես ինքս ուզում էի անել դա, բայց Նա պարզապես թույլ չէր տալիս ինձ անել դա:

100 Հետո, մոտ քսաներկու տարեկանում, ես հանդիպեցի մի աղջկա, նա շատ լավիկն էր: Նա մի աղջիկ էր, ով եկեղեցի՝ գերմանական լութերական եկեղեցի էր հաճախում: Նրա ազգանունը Բրումբախ էր, Բ-ր-ու-մ-բ-ա-խ, առաջացել է Բրումբաուխ անունից: Նա լավ աղջիկ էր: Նա ո՛չ ծխում, ո՛չ խմում, ո՛չ, ո՛չ էլ պարում կամ ինչ-որ բան էր անում, լավ աղջիկ էր: Ես մի որոշ ժամանակ ընկերություն էի անում նրա հետ, և ես...այն ժամանակ ես մոտ քսաներկու տարեկան էի, և ես բավականին գումար էի հավաքել, մինչև որ ինձ համար հին «Ֆորդ» գնեցի և ես...մենք միասին

գնում էինք ժամադրությունների: Այդ ժամանակ այնտեղ՝ մոտակայքում ոչ մի Լութերական եկեղեցին չկար, դրա համար նրանք Հովարդ Փարկից տեղափոխվել էին այստեղ:

101 Եվ նրանք...ծառայողը՝ դոկտոր Ռոյ Դևիսը, որը նշանակել էր ինձ Միսիոներական Մկրտչական եկեղեցում: Ափշոու քույրը. նա, որ Ափշոու եղբորը ուղարկել էր ինձ մոտ, ավելի ճիշտ՝ պատմել էր նրան իմ մասին, դոկտոր Ռոյ Դևիսը: Եվ այսպես նա քարոզում էր, և ուներ Առաջին Մկրտական եկեղեցին կամ...Չեմ կարծում, որ դա Առաջին Մկրտական եկեղեցին է եղել, այլ դա Միսիոն...կոչվում էր Ջեֆերսոնվիլի Միսիոներական Մկրտական եկեղեցի: Այդ ժամանակ դոկտոր Դևիսն այնտեղ էր քարոզում, և մենք երեկոյան գնում էինք եկեղեցի...և վերադառնում էինք: Ես երբեք չեմ միացել եկեղեցուն, ինձ պարզապես դուր էր գալիս գնալ նրա հետ, որովհետև հիմնական միտքը՝ նրա հետ գնալն էր: Ես պետք է ազնիվ լինեմ:

102 Եվ այսպես ման էինք գալիս նրա հետ...և մի օր ես... Նա լավ ընտանիքից էր: Եվ ես սկսեցի մտածել. «Դու հասկանո՞ւմ ես, հասկանո՞ւմ ես, ես չպետք է այդ աղջկա ժամանակը խլեմ: Դա, դա ճիշտ չէ, որովհետև նա լավ աղջիկ է, իսկ ես աղքատ եմ և, և ես...»: Հայրիկիս առողջությունը քայքայել էր և ես, ես...Ինձ համար ոչ մի ձև չկար լավ կյանք ապահովել այդպիսի աղջկան, ով սովոր էր գեղեցիկ տանն ու հատակին գցած գորգերին:

103 Հիշում եմ առաջին գորգը, որ տեսա, ես չգիտեի, թե ինչ էր դա: Ես կողքով անցա: Մտածում էի, որ դա կյանքումս երբևէ տեսած ամենագեղեցիկ բանն էր. «Ինչպե՞ս էին նման բանը փռել գետնին»: Դա առաջին գորգն էր, որ ես երբևէ տեսել էի: Դա, դա այն...Կարծեմ դրանք «կարպետ» էին կոչվում: Գուցե ես դա սխալ անվանեցի: «հյուսվածքի» կամ մի բանի նման էր, որ հյուսվում է իրար, փրված էր հատակին: Գեղեցիկ կանաչավուն կարմիր երանգներով, և մեջտեղում մի մեծ վարդ էր գործաց, գիտեք: Գեղեցիկ բան էր:

104 Եվ հիշում եմ, ես, ես որոշել էի, որ ես կա՛մ անուսնության առաջարկություն եմ անելու նրան, կա՛մ պետք է հեռանամ և թողնեմ, որ մի լավ մարդ ամուսնանա նրան հետ, մեկը, ով արժանի կլինի նրան, ով կկարողանա լավ կյանք ապահովել և լավ վերաբերվել նրան: Ես կարող էի լավ վերաբերվել նրան, բայց ես, ես, ես ժամում

ընդամենը 20 ցենտ էի ստանում: Ուստի, ես չէի կարող չափազանց լավ կյանք ապահովել նրա համար: Եվ ես... Մենք ստիպված էինք ամբողջ ընտանիքով հոգ տանել, հայրինկի առողջությունը քայքայվել էր, և ես պիտի հոգ տանեի նրանց բոլորի համար, այնպես որ, դա բավականին դժվար ժամանակ էր ինձ համար:

105 Եվ այսպես, ես մտածեցի. «Միակ բանը, որ ինձ մնում էր անել, դա՝ ասել նրան, որ ես, ես...նա...Ես, ես ուղղակի էլ չեմ գա, որովհետև ես չափազանց շատ էի մտածում նրա մասին՝ նրա կյանքը փչացնելու և նրան թույլ տալու ինձանով խաբվել»: Բացի այդ, ես մտածեցի. «Եթե ինչ–որ մեկը ցանկանա ամուսնանալ և հոգ տանել նրա մասին, գեղեցիկ ընտանիք կազմել: Եվ եթե ես չեմ կարող լինել նրա հետ, ես կիմանամ, ես կիմանամ, որ նա երջանիկ է»:

106 Եվ այսպես ես մտածում էի՝ «Բայց ես, ես ուղղակի, ես ուղղակի չեմ կարող հրաժարվել նրանից»: Եվ ես, ես ահավոր վիճակի մեջ էի: Ես օրեցօր մտածում էի դրա մասին: Ես չափազանց ամաչկոտ էի նրան խնդրելու, որ ամուսնանա ինձ հետ: Ամեն երեկո որոշում էի կայացնում. «Ես կհարցնեմ նրան»: Եվ երբ ես, ո՜հ, ինչ էր դա, մեջս ինչ–որ բան էր թրթռում...Եղբայրներ, դուք բոլորդ էլ հավանաբար նույն փորձառություն ունեցել եք: Եվ իսկապես անսովոր զգացողություն է, այտերս այրվում էին: Ես, ես չգիտեի: Ես չէի կարողանում հարցնել նրան:

107 Ենթադրում եմ, դուք հիմա զարմանում եք, թե ես ինչպես եմ ամուսնացել: Գիտե՞ք՝ ինչ: Ես նամակ գրեցի և հարցրեցի նրան: Եվ այսպես նրան...Դա «թակնագին օրիորդ» արտահայտությունը չէր, սիրո տեսանկյունից դա մի փոքր ավելին էր (գիտեք): Դա ուղղակի համաձայնություն չէր, դա...Ես, ես այն գրեցի որքան կարողացա լավ:

108 Ես մի քիչ վախենում էի նրա մորից: Նրա մայրը...նա մի տեսակ չոր կին էր, մինչդեռ նրա հայրը սիրալիր, տարեց հոլանդացի էր, ուղղակի հրաշալի անձնավորություն էր: Նա երկաթուղային ընկերության կազմակերպիչն էր, երկաթուղու աշխատող, այդ ժամանակ վաստակելով ամսական մոտ 500 դոլար, իսկ ես վաստակում էի ընդամենը 20 ցենտ ժամում, և պատրաստվում էի ամուսնանալ նրա դստեր հետ: Ո՜ւհ: Ես գիտեի, որ դա հնարավոր բան չէր: Եվ նրա մայրը շատ...Նա հրաշելի կին է: Նա, նա մի տեսակ այս բարձր հասարակությունից մեկն էր, գիտեք, կոշտ էր, գիտեք, և ամեն դեպքում, նա

ինձանից այնքան էլ շատ օգուտ չուներ: Ես ընդամենը հասարակ, անկեղծ գյուղացի տղա էի, և նա մտածում էր, որ Հոուփը պիտի մի քիչ ավելի լավ դասի տղայի հետ ընկերություն աներ, և ես, ես կարծում եմ, որ նա իրավացի էր: Եվ այսպես…Բայց այդ ժամանակ ես այդպես չէի կարծում:

109 Եվ այսպես, ես մտածում էի. «Դե, ես հիմա չգիտեմ, ինչպես դա անեմ: Ես, ես չէի կարող նրա ձեռքը խնդրել իր հորից, և ես, ես բնականաբար չեմ պատրաստվում խնդրել իր մորից: Ես առաջինը նրան կհարցնեմ»: Այսպիսով ես նամակ գրեցի նրան: Ես այդ առավոտ աշխատանքի գնալու ճանապարհին այն գցեցի փոստարկղի մեջ: Փոստարկղը…Մենք չորեքշաբթի երեկոյան էինք գնում եկեղեցի, իսկ դա երկուշաբթի առավոտյան էր: Ես ամբողջ կիրակի փորձում էի ասել նրան, որ ուզում եմ ամուսնանալ նրա հետ, սակայն համարձակությունս ուղղակի չէր հերիքում:

110 Այդ ժամանակ ես նամակը գցեցի փոստարկղի մեջ: Այն օրն աշխատանքի վայրում ես հանկարծ մտածեցի. «Իսկ եթե նամակը ընկած լինի նրա մոր ձեռքը»: Ո՛հ, Աստված իմ: Ես գիտեի, որ եթե, եթե նամակը ընկած լիներ նրա ձեռքը, կորած եմ, որովհետև նա այնքան էլ չէր անհանգստանում իմ մասին: Ես այդ միտքն ուղղակի ցրում էի:

111 Այդ չորեքշաբթի երեկոյան, երբ ես եկա, ո՛հ, Աստված իմ, մտածում էի. «Ես ինչպե՞ս եմ բարձրալանու այնտեղ: Եթե նամակը ընկել է նրա մոր ձեռքը, ապա նա կյանքս կուտի, դրա համար հուսով եմ՝ Հոուփն է ստացել այն»: Ես այն հասցեագրել էի Հոուփին: Դա նրա անուն էր, Հոուփ [Հույս. թրգմ.]: Եվ այսպես ես ասացի. «Ես ուղղակի կգրեմ Հոուփին»: Եվ այսպես…Ես մտածում էի, որ գուցե նա նամակը չի ստացել:

112 Ուստի ես գիտեի, որ ավելի լավ էր դրսում կանգնեմ և ազդանշան տամ նրան, որ դուրս գա: Ո՛հ, Աստված իմ: Եթե մի տղա բավական քաջություն չունի մոտենալ տանը, թակել դուռը և խնդրել, որ աղջկան կանչեն, ուրեմն թող գործ չունենա նրա հետ: Դա միանգամայն ճիշտ է: Դա այնքան անհեթեթ է: Դա էժանագին բան է:

113 Այսպիսով կանգնեցրի իմ հին «Ֆորդը», գիտեք, ես այն ամբողջությամբ պլպլացրել էի: Բարձրացա և դուռը թակեցի: Ողորմի՛ր Աստված, դուռը բացեց նրա մայրիկը:

Շունչս կտրվեց և ես ասացի. «Բ–բ–բարև ձեզ, տիկին Բրումբախ»: Այո:

114 — Բարև, Ուիլլիամ:

— Ոհո՛, Ուիլլիամ,— մտածեցի ես:

— Չե՞ս ուզում ներս գալ,— ասաց նա:

115 — Շնորհակալություն,— ասացի ես: Ես ներս մտա:— Հոուփը պատրա՞ստ է:

116 Եվ հենց այդ ժամանակ Հոուփը մոտեցավ, տան միջով թռվռալով՝ տասնվեցամյա աղջկա պես: Եվ նա ասաց. «Ողջո՛ւյն, Բիլլի»:

117 — Ողջույն, Հոուփ,— ասացի ես:— Պատրա՞ստ ես եկեղեցի գնալու համար:

—Մի վայրկյան,— ասաց նա:

118 «Ո՛հ, Աստված իմ: Նա նամակը չի ստացել: Նա նամակը չի տասցել: Լա՛վ է, լա՛վ է, լա՛վ է»,— մտածեցի ես: Հոուփը նույնպես նամակը չի ստացել, ուրեմն ամեն բան լավ կլինի, այլապես նա կասեր ինձ դրա մասին»: Հետևաբար, ես ավելի թեթև զգացի ինձ:

119 Իսկ հետո, երբ գնացի եկեղեցի, ես մտածում էի. «Իսկ եթե նա նամակը ստացե՞լ է»: Հասկանո՞ւմ եք: Եվ չէի լսում՝ ինչ էր քարոզում դոկտոր Դևիսը: Ես աչքի տակով նրան նայեցի և մտածեցի. «Կամ գուցե նա զսպում է իրեն, և նա իսկապես ինձ կասի այդ մասին, երբ դուրս գանք այստեղից, երբ իրենից հարցնեմ»: Եվ ես չէի լսում, թե եղբայր Դևիսն ինչ էր քարոզում: Եվ, և ես աչքի տակով նրան նայեցի և մտածեցի. «Ես չեմ կարող հրաժարվել նրանից, բայց...Եվ ես, ես...իհարկե, հարաբերությունները կպարզենք»:

120 Այսպիսով, եկեղեցուց դուրս գալուց հետո մենք սկսեցինք միասին փողոցով քայլել դեպի ներքև՝ տուն էինք գնում, և, և այսպես մենք ուղղվեցանք դեպի հին «Ֆորդը»: Ողջ ճանապարհին լուսինն ամբողջությամբ փայլում էր, գիտեք, ես նայեցի նրան և նա գեղեցիկ էր: Ես նայեցի նրան և մտածեցի. «Ո՞հ, որքա՞ն կուզեյի լինել նրա հետ, բայց կարծում եմ, որ չեմ կարողանա»:

121 Եվ այսպես, ես մի փոքր առաջ քայլեցի, գիտեք, և նորից նայեցի նրան: — Ինչպե՞ս, ինչպե՞ս ես քեզ զգում այսօր,— հարցրեցի ես:

— Ո՞հ, լավ եմ,— ասաց նա:

122 Եվ մենք հին «Ֆորդի» ներքևում կանգնեցրինք, և սկսեցինք դուրս գալ, գիտեք, շրջանցեցինք և քայլելով գնացինք դեպի իրենց տունը: Եվ ես նրա հետ բարձրացա մինչև դուռ: «Գիտե՞ս, նա հավանաբար նամակը չի ստացել, դրա համար ես կարող էի մոռանալ դրա մասին: Ամեն դեպքում ես շնորհքի ևս մի շաբաթ կունենամ»,— մտածեցի ես: Հետևաբար, ես ինձ բավականին լավ էի զգում:

Նա ասաց. — Բի՛լլի:

— Այո՞:

— Ես ստացա քո նամակը,— ասաց նա: Ո՛հ, Աստված իմ:

— Ստացա՞ր:

123 — Ըհը՛,— պատասխանեց նա: Նա պարզապես շարունակում էր քայլել՝ առանց բառ անգամ ավելացնելու:

124 Ես մտածեց. «Այ կին, մի բան ասա՛ ինձ: Ասա՛ ինձ հեռացիր, կամ էլ ասա՛, թե ինչ ես մտածում դրա մասին»: — Դու, դու այն կարդացի՞ր:

— Ըհը՛:

125 Գիտեք, կանայք ինչպես կարող են քեզ անգիտության մեջ պահել: Ո՛հ, ես, ես այս դեպքում միայն ի նկատի չունեմ, հասկանո՞ւմ եք: Հասկանո՞ւմ եք: Բայց ամեն դեպքում, գիտեք, ես, ես մտածում էի. «Ինչո՞ւ դու մի բան չես ասո՞ւմ»: Հասկանո՞ւմ եք, ես շարունակում էի քայլել: — Դու այն ամբողջությամբ կարդացի՞ր— հարցրեցի ես:

Եվ նա...[Դադար ժապավենի վրա: Ծան. Խմբ.]: «Ըհը»:

126 Մենք համարյա դռան մոտ էինք, և ես մտածեցի. «Դե, մի ձգձգիր մինչև շքամուտքը, գուցե ես չկարողանամ շրջանցել նրանց, այնպես որ հիմա ասա»: Եվ այսպես, ես շարունակում էի սպասել:

127 — Բի՛լլի, ես կցանկանայի դա անել,— ասաց նա:— Ես սիրում եմ քեզ: Թող Աստված օրհնի նրա հոգին, նա հիմա Փառքի մեջ է: — Ես քեզ սիրում եմ,— ասաց նա:— Կարծում եմ մենք պետք է մեր ծնողներին ասենք...ծնողներին դրա մասին: Այդպես չե՞ս կարծում:

128 — Սիրելի՛ս, լսի՛ր, ե՛կ սկսենք նրանից, որ դա կիսովի ենք անելու,— ասացի ես: Ասացի. «Ես կասեմ քո հորը, եթե

դու ասես քո մորը»: Սկզբի համար ամենավատ մասը նրա վրա գցելով:

— Լավ, եթե դու առաջինն ասես հայրիկին:

Ասացի. «Լավ, ես կասեմ նրան կիրակի երեկոյան»:

129 Այսպիսով եկավ կիրակի երեկոն: Ես եկեղեցուց բերեցի նրան տուն և ես...Նա շարունակաբար նայում էր ինձ: Նայեցի, արդեն ինն անց կես էր, սովորաբար դա իմ գնալու ժամն էր: Չարլին, իր սեղանի առջև նստած, տպում էր, իսկ տիկին Բրումբախն, անկյունում նստած, հելունով էր գործում, գիտեք կամ փոքր օղակներ են դնում իրերի վրա, գիտեք: Չգիտեմ, թե ինչպես եք դրանց անվանում: Եվ այսպես, նա դրա նման մի բան էր անում: Հոուփը շարունակում էր ինձ նայել: Նա գլխի շարժումով նշան էր անում, գիտեք, դրդում էր ինձ մոտենալ իր հորը: Եվ ես...Ո՛հ, Աստված իմ: Ես մտածում էի. «Իսկ եթե նա՝ «Ոչ» ասի: Այսպիսով, ես ուղղևորվեցի դեպի դուռը, ասացի. «Դե, կարծում եմ, ես ավելի լավ է գնամ»:

130 Եվ ես քայլելով գնացի դեպի դուռը, և, և նա էլ ուղղևորվեց ինձ հետ: Նա միշտ ուղեկցում էր ինձ մինչև դուռը և «բարի գիշեր» էր մաղթում: Եվ այսպես, ես քայլելով գնացի դեպի դուռը և նա ասաց. «Դու չե՞ս պատրաստվում ասել նրան»:

131 — Ըհը,— ասացի ես:— Ես, իհարկե, կփորձեմ, բայց ես, ես, ես չգիտեմ ինչպես անել դա:

132 — Ես պարզապես կվերադառնամ, իսկ դու նրան դուրս կանչիր,— ասաց նա: Այսպիսով, նա վերադառցավ և ինձ թողեց այնտեղ կանգնած:

— Չարլի՛,— ասացի ես:

— Այ՞ո, Բիլլ,— շուռ եկավ և ասաց նա:

— Կարո՞ղ եմ ձեզ հետ մեկ րոպե խոսել:

133 — Իհարկե: Նա շրջվեց իր գրասեղանից: Տիկին Բրումբախը նայեց նրան, նայեց Հոուփին, հետո՝ ինձ:

— Գուցե դո՞ւրս գանք շքամուտք:

— Արի դուրս գանք,— ասաց նա: Այսպիսով, նա դուրս եկավ պատշգամբ:

— Հիանալի երեկո է, այդպես չէ՞,— ասացի ես:

— Ճիշտ որ:

— Բավականին տաք է:

— Այո, իհարկե,— նա նայեց ինձ:

134 Ես ասացի. «Ես քրտնաջան եմ աշխատել, դուք գիտեք, անգամ իմ ձեռքերն կոշտուկներ են առաջացել»:

Նա ասաց. «Դու կարող ես տանել նրան, Բի՛լլ»: Ո՛հ, Աստված իմ: «Դու կարող ես տանել նրան»:

135 Ես մտածեցի. «Ո՛հ, դա արդեն լավ է»: Ասացի. «Դուք լո՞ւրջ եք ասում, Չարլի»: Նա ասաց...Ես ասացի. «Լսի՛ր Չարլի, ես հասկանում եմ, որ նա ձեր դուստրն է, և դուք փողատեր եք»:

136 Նա իր ձեռքը դրեց իմ ուսին: Ասաց. — Լսի՛ր, Բիլլ, փողը դա դեռ ամենը չէ մարդու կյանքում: Ասաց...

137 Ես ասացի. — Չարլի՛, ես, ես վաստակում եմ ընդամենը 20 ցենտ ժամում, բայց ես սիրում եմ նրան, նա էլ՝ ինձ: Եվ ես խոսք եմ տալիս ձեզ, Չարլի, որ կաշխատեմ, մինչև որ այս...կոշտուկները պատեն իմ ձեռքերը նրա կյանքն ապահովելու համար: Ես նրան հավատարիմ կլինեմ որքան կկարողանամ:

138 — Ես հավատում եմ դրան, Բի՛լլ,— ասաց նա:— Լսի՛ր, Բի՛լլ, ես ուզում եմ քեզ ասել,— ասաց,— գիտե՞ս, փող վաստակելը դեռ չի նշանակում երջանիկ լինել: Պարզապես բարի եղիր նրա նկատմամբ: Ու ես գիտեմ, որ դու այդպես էլ կանես:

— Ծնորհակալ եմ, Չարլի, ես, իհարկե, այդպես էլ կանեմ:

139 Հետո՝ նրա հերթն էր ասել մայրիկին: Չգիտեմ, թե ինչպես նրան հաջողվեց դա անել, բայց մենք ամուսնացանք:

140 Երբ մենք ամուսնացանք, ոչինչ չունեինք, ոչինչ տնային տնտեսության համար: Կարծեմ ունեինք երկու թե երեք դոլար: Այսպիսով, մենք մի տուն վարձեցինք, որը մեզ վրա նստում էր ամսեկան չորս դոլար: Դա փոքրիկ, հին երկու սենյականոց բնակարան էր: Ինչ-որ մեկը մեզ հին ծալովի մահճակալ էր տվել: Հետաքրքիր է, որևէ մեկը տեսե՞լ է երբևէ հին ծալովի մահճակալ: Նրանք դա մեզ տվեցին: Ես գնացի «Սիերս և Ռեբուկս» խանութ և գնեցի փոքրիկ սեղան վեց աթոռներով, որը, որը ներկած չէր, գիտեք, մենք դա ժամանակավոր էինք վերցրել: Հետո գնացի պարոն Վեբերի՝ հնավաճառի մոտ, և խոհանոցի սալօջախ գնեցի: Դրա համար 75 ցենտ վճառեցի, և մեկ դոլարից մի քիչ ավել կրակացանցի համար: Մենք ստեղծեցինք տնային տնտեսություն: Հիշում եմ, թե ինչպես աթոռները ներկելիս երեքնուկ

նկարեցի դրանց վրա: Բայց, այնուամենայնիվ, օ՜հ, մենք երջանիկ էինք: Մենք ունեինք մեկս մյուսին, դա էր ամենը, ինչ անհրաժեշտ էր: Եվ Աստծուն Իր շնորհքով և բարությամբ…մենք աշխարհի ամենաերջանիկ զույգն էինք:

141 Ես հասկացա, որ երջանկությունը կախված չէ նրանից, թե աշխարհի բարիքներից որքանն է քեզ պատկանում, այլ նրանից, թե որքանով ես բավարարված քեզ պատկանող բաժնով:

142 Շատ չանցած՝ Աստված իջավ և օրհնեց մեր փոքրիկ օջախը՝ մենք տղա ունեցանք: Նրա անունը Բիլլի Փոլ էր, հիմա նա այստեղ՝ հավաքույթում է: Որոշ ժամանակ անց՝ մոտ տասնմեկ ամիս անց, Նա կրկին օրհնեց մեզ Շարոն Ռոուզ անունով փոքրիկ աղջնակով, վերցված է «Սարոնի ծաղիկ» բառից:

143 Հիշում եմ նաև, թե ինչպես մի օր ես գումար էի հավաքել և պատրաստվում էի կարճատև արձակուրդ վերցնել, Պաու–Պաու լիճը գնալ՝ ձկնորսություն: Եվ հետ վերադառնալիս…

144 Այդ ընդացքում…Ես իմ դարձը բաց եմ թողնում: Ես դարձի եկա: Եվ դոկտոր Ռոյ Դևիսի կողմից նշանակվեցի Միսիոներական Մկրտական եկեղեցում, և դարձա ծառայող և ունեի խորան, ուր հիմա քարոզչություն եմ անում Ջեֆերսոնվիլում: Եվ ես հովվություն էի անում մի փոքրիկ եկեղեցում: Եվ ես…

145 Ոչ մի դրամ. Տասնյոթ տարի ես հովվություն եմ արել եկեղեցում և երբեք մի պենի էլ չեմ վերցրել: Ես չեմ հավատում…Այնտեղ նույնիսկ նվիրատվության ապսե չկար: Եվ տասանորդը, որ ստանում էի աշխատանքից և այլն, շենքի հետևում մի փոքրիկ արկղ կար, որի վրա գրված էր. «Այն, ինչ արեցիք այս փոքրերից մեկին, Ինձ արիք»: Ահա թե ինչպես էինք եկեղեցու համար վճառվում: Մենք տաս տարվա վարկ ունեինք վճառելու, իսկ մարել էինք երկու տարվանից քիչ: Եվ ես երբեք ոչ մի տեսակ նվիրատվություն չեմ հավաքել:

146 Հետո ես, ո՜հ, մի քանի դոլար ունեի, որ հավաքել էի արձակուրդիս համար: Հոուփը նույնպես աշխատում էր, «Լավ վերնաշապիկների գործարանում»: Հաճելի, սիրելի աղջիկ էր: Նրա գերեզմանն այսօր ձյունով պատած է, բայց նա դեռ իմ սրտում է: Հիշում եմ նաև, նրան այսպես

քրթնաջան աշխատելիս, որպեսզի ինձ օգներ բավական գումար հավաքելու, որ գնամ այդ լիճը ձկնորսության:

147 Լճից վերադառնալիս, Ինդիանա նահանգի Միշավակա և հարավային Բենդով անցնելիս, սկսեցի նկատել մեքենաներ, որոնց հետևում նշան կար «Միայն Հիսուս»: Մտածեցի. «Միայն Հիսուս», տարօրինակ է հնչում»: Ես սկսեցի ուշադրություն դարձնել այդ նշաններին: Եվ դա ամենուրեք էր սկսած՝ հեծանիվներից, «Ֆորդերից», «Կադիլակներից» և այլնի վրա՝ «Միայն Հիսուս»: Հետևցի նրանցից մի քանիսին, և նրանք եկան մի մեծ եկեղեցական շենքի մոտ: Ես պարզեցի, որ նրանք հոգեգալստականներ են:

148 Լսել էի Հոգեգալստանկանների մասին, որ նրանք մի խումբ «սուրբ թռչկոտողներ էին, ովքեր թավալվում էին հատակին, փրփուրը բերաններին», և ամեն տեսակ բաներ, ինչ որ ինձ պատմել էին դրա մասին: Հետևաբար ես ոչ մի ընդանուր բար չէի ոգում ունենալ դրա հետ:

149 Այսպիսով, ես լսում էի, թե նրանք ինչպես են իրենց պահում այնտեց և մտածեցի. «Հավանաբար, ես ուղղակի ներս մտնեմ»: Ես կանգնեցրի իմ հին «Ֆորդ»-ը և ներս մտա, և այնպիսի երգեցողություն էր, որի նմանը երբեք չես լսել քո կյանքում: Եվ ես պարզեցի, որ այնտեղ երկու մեծ եկեղեցիներ կային, դրանցից մեկը կոչվում էր «P.A. of J.C», իսկ մյուսը՝ «P.A. of W.», ձեզանից շատերը գուցե հիշեն այդ հին կազմա...Կարծեմ նրանք միավորվել են և հիմա կոչվում են Միացյալ Հոգեգալստականների եկեղեցի: Ես լսեցի նրանց վարդապետներից մի քանիսին: Եվ նրանք այնտեղ կանգնած էին, ո՜հ, նրանք սովորեցնում էին Հիսուսի մասին և այն մասին, թե ինչ մեծ է Նա, թե ամեն բան ինչ փառահեղ է, և «Սուրբ Հոգով մկրտվելու» մասին: Ես մտածեցի. «Ի՞նչի մասին են նրանք խոսում»:

150 Որոշ ժամանակ անց ինչ-որ մեկը ցատկեց և սկսեց խոսել լեզուներով: Ես այդպիսի բան երբեք չէի լսել իմ կյանքում: Եվ ահա մի կին ամբողջ ուժով վազեց առաջ: Այնուհետև նրանք բոլորը վեր կացան և սկսեցին վազել: Ես մտածեցի. «Դե՛, եղբայր, նրանք, անշուշտ, ոչ մի եկեղեցական կարգ ու կանոն չեն պահում»: Գոռում, աղաղակում և իրենց պահում են այսպես, ես մտածեցի. «Այս ի՞նչ ամբոխ է»: Բայց գիտե՞ք, մի բան էլ կա, որքան ավելի երկար էի նստում այնտեղ, այնքան ավելի էր դա ինձ դուր գալիս: Թվում էր թե իսկապես ինչ-որ լավ բան կար: Եվ ես սկսեցի հետևել նրանց: Եվ դա շարունակվում

էր: Ես մտածեցի. «Ես մի փոքր էլ կհանդուրժեմ նրանց, որովհետև ես…Ես դռան մոտ էի: Եթե հանկարծակի որևէ բան սկսցվի ես դռնով կփախչեմ: Հիշում եմ մեքենան որտեղ եմ կայանել՝ անմիջապես անկյունի հետևում»:

151 Եվ ես լսել էի, որ նրանց քարոզիչներից մի քանիսիը գիտնականներ և ուսանողներ էին: «Դա հրաշալի է»,— մտածեցի ես:

Եվ ահա եկավ ընթրիքի ժամը և ասացին. «Բոլորս գնում ենք ընթրիքի»:

152 Բայց ես մտածեցի. «Մի՛ որպե: Ես մի դոլար և 75 ցենտ ունեմ տուն գնալու համար, և ես…»: Դա իմ ողջ գումարն էր բենզինի համար: Դա պահել էի տուն հասնելու համար: Իսկ ես հին «Ֆորդ» ունեի, այն բավականին լավ, հին «Ֆորդ» էր: Ոչ թե ինչ-որ հետամնաց, այլ ճիշտ ինչպես նրանցից մեկը, պարզապես մաշված: Եվ այն…Ես իրոք հավատում էի, որ «Ֆորդը» կարող է ժամում երեսուն մղոն գնալ, բայց դա, իհարկե, տասնհինգն *այսպես* և տասնհինգն *այնպես*: Հասկանո՞ւմ եք, գումարում եք իրար, ստանում եք երեսուն: Եվ այսպես այն…Ես մտածեցի. «Լավ, այս երեկո ես դուրս կգնամ և հետո…»: Ես մնացի երեկոյան ծառաության համար:

153 Եվ, ո՛հ, նա ասաց. «Բոլոր քարոզիչները՝ անկախ հարանվանությունից, թող մոտենան բեմահարթակին»: Այնտեղ մոտ երկու հարյուր քարոզիչներ էինք, ես բարձրացա: — Մենք ժամանակ չունենք, որ դուք բոլորդ քարոզեք,— ասաց նա: — Պարզապես մոտեցեք լսափողին և ասեք, թե ով եք և որտեղից եք:

154 Եկավ իմ հերթը, ես ասացի. «Ուիլիամ Բրանհամ, մկտրական: Ջեֆերսոնվիլ, Ինդիանա»: Անցա:

155 Ես լսում էի, թե մնացած բոլորն ինչպես էին իրենց ներկայացնում՝ «հոգեգալստական, հոգեգալստական, հոգեգալստական Հ.Ա. Վ, Հ.Ա.Ջ.Ք, Հ.Ա.Վ.,Պ…»:

156 Ես անցա: Մտածեցի. «Դե ինչ, ենթադրում եմ, ես այստեղ անճոռնի ջուտիկ եմ»: Եվ այսպես, ես նստեցի, սպասում էի:

157 Այդ օրը նրանք հիանալի, երիտասարդ քարոզիչներ ունեինք, և նրանք հզոր էին քարոզում: Հետո նրանք ասացին. «Այս երեկո քարոզելու է…»: Կարծեմ նրան «Երեց» էին կոչում: Իրենց ծառայողներին «Պատվելիի» փոխարեն «Երեց» էին կոչում: Նրանք սևամորթ մի տղամարդու դուրս բերեցին այնտեղ, և նա հագին

այս հնաոճ քարոզիրների բաճկոն էր։ Չեմ կարծում երբևէ տեսած լինեք։ Հետևից աղավնու պոչի նման երկար էր, գիտեք, թավշե օձիքով, և ճերմակ մազերի օղակը նրա գլխի շուրջ։ Խեղճ ծեռունին *այսպես* դուրս եկավ, գիտեք։ Նա կանգնեց այնտեղ և շրջվեց։ Եվ երբ բոլոր քարոզիչները քարոզում էին Հիսուսի մասին և մեծության...թե որքան մեծ էր Նա և այլն, այդ ծերունին իր թեման վերցրեց Հոբից։ «Որտե՞ղ էիր դու, երբ ես աշխարհի հիմքը դրեցի, կամ երբ առավոտյան աստղերը միասին երգում էին և Աստծո որդիները ուրախությունից աղաղակում էին»։

158 Եվ տարեց տղամարդը...ես մտածեցի. «Ինչո՞ւ նրանք այդ երիտասարդներից որևէ մեկին չեն դրել այնտեղ քարոզելու համար»։ Հսկայական...տեղը լեփ-լեցուն էր։ Եվ ես մտածեցի. «Ինչո՞ւ նրանք այդպես չեն արել»։

159 Իսկ հետո այդ տարեց քարոզիչը փոխանակ քարոզեր այն մասին, թե ինչ է կատարվում այստեղ՝ երկրի վրա, սկսեց քարոզել այն մասին, թե ինչ էր շարունակ կատարվում Երկնքում։ Դե, նա վերցրեց Նրան սկզբում՝ ժամանակների սկզբում և հետո տեղափոխեց Նրան Երկրորդ գալուստ, ծիածանի հորիզոնականով։ Նման քարոզ երբեք չէի լսել իմ կյանքում։ Մոտավորապես այդ պահին Հոգին հարվածեց նրան, նա ցատկեց մոտ *այս* բարձրության վրա, կրունկները կտտացրեց, ուսերն ուղղեց և սկսեց քայլել հարթակի վրա՝ ասաց. «Այստեղ ձեզ մոտ տեղը չի հերիքում, որ ես քարոզեմ»։ Իսկ նա այնտեղ ավելի շատ տեղ ուներ, քան ես այստեղ։

160 «Եթե Դա ստիպում է ծերունուն այդպես իրեն պահել, ապա ի՞նչ կլինի, եթե Այն իջնի ինձ վրա»,— մտածեցի ես։ Ես, ես մտածեցի. «Գուցե ես Դրա կարիքն ունեմ»։ Երբ նա դուրս եկավ այնտեղ, ես այնքան խղճացի նրան, բայց երբ նա գնաց, ինքս ինձ էի խղճում։ Եվ ես նայում էի, թե ինչպես էր նա հեռանում այնտեղից։

161 Այդ երեկո ես դուրս եկա և մտածեցի. «Հաջորդ առավոտ ես ոչ մեկին չեմ ասի, թե որտեղից եմ և ով եմ ես»։ Այսպիսով, ես դուրս եկա և այդ գիշեր տաբատս արդուկեցի։ Վերցրեցի...գնացի եգիպտացորենի արտում քնելու, իջա և ինձ համար մի քանի հնացած բլիթներ գնեցի։ Դուք...Ես մի ցենտով մի քանի հատ գնեցի։ Այնտեղ՝ ներքևում ջրի ծորակ կար, ես մի քիչ ջուր հանեցի։ Գիտեի, որ ես մի որոշ ժամանակ մնալու եմ, դրա համար ջուրը հավաքեցի և խմեցի և գնացի կերա

իմ բլիթները։ Վերադարձա՝ էլի ջուր խմեցի։ Գնացի եգիպտացորենի արտը, վերցրեցի երկու նստարանները և զոլավոր տաբատս տեղադրեցի դրանց միջև, փռեցի նստարանների արանքը։

162 Եվ այդ գիշեր…ես ամբողջ գիշերը գրեթե անց կացրի աղոթքի մեջ։ Ասում էի. «Տե՛ր, ես ո՞ւր եմ ընկել։ Ես այդպիսի կրոնավոր մարդիկ երբեք չեմ տեսել իմ կյանքում»։ Եվ ես ասացի. «Օգնի՛ր ինձ հասկանալ, թե դա ինչ է»։

163 Հաջորդ առավոտ ես գնացի այնտեղ։ Մեզ հրավիրեցին նախաճաշի։ Ես, իհարկե, չգնացի նրանց հետ հաց ուտելու, որովհետև ոչինչ չունեի զոհաբերության արկղը գցելու համար։ Եվ ես պարզապես հետ գնացի։ Հաջորդ առավոտ, ներս մտնելով (ես մի քանի բլիթներ էի կերել) նստեցի։ Նրանք խոսափող ունեին։ Ես նախկինում խոսափող երբեք չէի տեսել, և ես վախենում էի դրանից։ Այսպիսով նրանք…Եվ նրա լարն այդպես կախված էր, կախ էր ընկած։ Այդպիսի կախովի խոսափող էր։ — Անցած երեկո այստեղ՝ բեմահարթակի վրա երիտասարդ մի քարոզիչ կար, մկրտական,— ասաց նա։

— Ո-հո՛, հիմա ինձ լավ քննության կենթարկեն,— մտածեցի ես։

164 — Նա ամենաերիտասարդ քարոզիչն էր հարթակի վրա։ Նրա ազգանունը Բրանհամ էր։ Ինչ-որ մեկը գիտի՞, թե որտեղ է նա։ Ասե՛ք նրան, որ առաջ գա, մենք ցանկանում ենք, որ նա պատգամ տա այս առավոտ,— ասաց նա։

165 Ո՛հ, Աստված իմ։ Հագիս վերնաշապիկ և զոլավոր տաբատ էր, գիտեք։ Իսկ մենք մկրտականներս համարում ենք, որ ամբիոնի հետևում կանգնելու համար հագիդ պետք է կոստյում լինի, գիտեք։ Եվ այսպես.. Ես, ես ուղղակի շատ լուռ նստել էի։ Այդ ընթացքում…Նրանք դա անցկացնում էին Հյուսիսում (իրենց միջազգային համաժողովը), որովհետև եթե դա լիներ Հարավում սևաորթները չէին կարող գալ։ Այնտեղ սևամորթներ կային, իսկ ես հարավի բնակիչ էի, այդ ժամանակ ես ձևապատշաճ էի, գիտեք, կարծում էի՝ ես մյուսներից մի քիչ ավելի լավն եմ։ Եվ այն առավոտ այնպես ստացվեց, որ կողքիս նստածը սևամորթ էր։ Ես նստեցի ու նայեցի նրան։ Մտածում էի. «Դե, նա եղբայր է»։

166 — Ինչ-որ մեկը գիտի՞, թե որտեղ է Ուիլլիամ Բրանհամը,— ասաց նա։ Ես *այսպես* սեղմվելով՝ ներս խրվեցի աթոռի մեջ։ Ասաց, երկրորդ անգամ հայտարարեց, ասաց. «Դրսում ի՞նչ-որ մեկը, (լսափողը այսպես քաշելով), գիտի՞, թե որտեղ է Ուիլլիամ Բրանհամը։ Ասե՛ք նրան, որ մենք ցանկանում ենք, որ նա բեմ բարձրանա և քարոզի այս առավոտյան։ Նա մկրտական քարոզիչ է հարավային Ինդիանայից»։

167 Ես ուղղակի լուռ ու կծկված նստել էի, գիտեք։ Ամեն դեպքում, ինձ ոչ ոք չէր ճանաչում։ Այդ սևամորթ տղան նայեց ինձ և հացրեց. «Չգիտե՞ս, թե որտեղ է նա»։

168 Ես մտածեցի. «Ես, ես կամ մի սուտ պետք է հնարեմ կամ էլ պետք է մի բան անեմ»։ Ուստի ես ասացի. — Լսի՛ր։

— Այո՞, պարոն։

— Ես ուզում եմ քեզ մի բան ասել,— ասացի ես։— Այդ ես, ես եմ։

— Դե, բարձացիր այնտեղ։

169 — Ո՛չ, ես չեմ կարող։ Հասկանո՞ւմ ես,— ասացի ես։ — Ես այս հին զոլավոր տաբատով եմ և այս վերնաշապիկով։ Ես չեմ կարող բարձրանալ անտեղ։

170 — Այդ մարդկանց հետաքրքիր չէ, թե դու ինչպես ես հագնված։ Բարձրացի՛ր,— ասաց նա։

— Ո՛չ, ո՛չ,— ասացի ես։— Լուռ նստիր, ոչինչ մի ասա։

171 Մի րոպեից նորից վերադարձան խոսափողի մոտ և ասացին. «Որևէ մեկը գիտի՞, թե որտեղ է Ուիլլիամ Բրանհամը»։

172 — Նա այստե՛ղ է։ Նա այստե՛ղ է։ Նա այստե՛ղ է,— ասաց նա։ Ո՛հ, Աստված իմ։ Եվ ահա ես այդ վերնաշապիկով բարձրանում եմ, հասկանում եք։ Եվ ես…

173 — Բարձացե՛ք, պարոն Բրանհամ, մենք ցանկանում ենք, որ դուք քարոզեք,— ասաց նա։ Ո՛հ, Աստված իմ, բոլոր այդ քարոզիչների, ա՜խ, բոլոր այդ մարդկանց առջև։ Ես սայթաքելով էի գնում, գիտեք։ Դեմքս կարմրել էր, և ականջներս այրվում էին։ Եվ ես սայթաքեցի, զոլավոր տաբատով և վերնաշապիկով էի, քարոզիչ, մկրտական քարոզիչը մոտենում է խոսափողին, նման բան դեռ ոչ ոք չէր տեսել, հասկանում եք։

174 Ես կանգնեցի այնտեղ և ասացի. «Դե՛, ես, ես չգիտեի դրա մասին»։ Ես քթիս տակ խոսում, նյարդայնանում էի, հասկանում եք։ Եվ, և ես այստեղ վերցրեցի

մոտավորապես Ղուկասի Ավետարանի 16-րդ գլխից և մտածեցի. «Դե ինչ. հիմա...»: Եվ ես, ես վերցրեցի՝ «Եվ դժոխքում նա իր աչքերը բարձրացրեց և աղաղակեց» թեման: Եվ ես ունեի...Այսպիսով ես սկսեցի քարոզել, գիտեք, և քարոզելով ես մի քիչ ավելի լավ զգացի ինձ: Եվ ես ասացի. «Հարուստը դժոխքում էր, և նա աղաղակեց»: Այդ փոքրիկ երեք բարեռը, ես նման քարոզներ շատ ունեմ՝ «Հավատո՞ւմ ես Սրան», և «Ասա՛ ժայռին», լսել եք, թե ինչպես եմ քարոզել դրանք: Եվ ես ասացի: «Եվ այդ ժամանակ նա աղաղակեց»: Եվ ես ասացի. «Այնտեղ երեխաներ չկային, անշուշտ, դժոխքում չկան երեխաներ: Այն ժամանակ նա աղաղակեց»: Ես շարունակեցի. «Այնտեղ ծաղիկներ չկային: Այն ժամանակ նա աղաղակեց: Այնտեղ Աստված չկար: Այն ժամանակ նա աղաղակեց: Այնտեղ Քրիստոս չկար: Այն ժամանակ նա աղաղակեց»: Հետո ես աղաղակեցի: Ինչ-որ բան համակեց ինձ: Ո՛հ, Աստված իմ: Թե ի՞նչ կատարվեց հետո, ես չգիտեմ: Երբ ուշքի եկա արդեն փողոցում կանգնած էի: Այդ մարդիկ գոռում, գոչում և լաց էին լինում, ես նույնպես, դա ակնածանքի ժամանակ էր:

175 Երբ ես դուրս եկա մի տղամարդ՝ Տեքսասի հսկայական, մեծ գլխարկով, մեծ կոշիկներով մոտեցավ ինձ և ասաց. «Ես ավագ *այսինչ այնինչն եմ*»: Քարոզիչ, կովբոյական երկարաճիթ կոշիկներով, կովբոյական հագուստով:

Մտածեցի. «Դե ինչ, այդ դեպքում իմ զոլավար տաբատն այնքան էլ վատը չի»:

176 — Ես ուզում եմ, որ դուք գաք ինձ մոտ Տեքսաս և արթնութուն անցկացնեք,— ասաց նա:

177 — Ո-հո՛, թույլ տվեք գրի առնեմ դա, պարոն,— ասացի ես: Եվ ես այդպես գրում էի:

178 Հետո ինձ մոտեցավ մի մարդ վանդակավոր տաբատով, ինչպիսին հագնում են գոլֆ խաղացողները, գիտեք, ազատ անդրավարտիքով: Նա ասաց. «Ես երեց *այսինչ, այնինչը՝ն եմ* Մայամիից: Ես կուզենայի, որ...

179 — Հագուստը գուցե այնքան էլ մեծ նշանակություն չունի,— մտածեցի ես: Ես նայեցի դրան և մտացեցի. «Լավ է»:

180 Այսպիսով ես հավաքեցի այս բաները և գնացի տուն: Կինս դիմավորեց ինձ, նա ասաց. «Ինչո՞ւ ես այդպես փայլում երջանկությունից, Բիլլի»:

181 — Ես գտել եմ աշխարհի ամենալավ եկեղեցին,— ասացի ես։— Դա լավագույն բանն է, որ ես երբևէ տեսել եմ։ Այդ մարդիկ չեն ամաչում իրենց կրոնից։ Եվ, ո՛հ, ես ամեն ինչ պատմեցի նրան։ — Ապա նայի՛ր այստեղ, սիրելի՛ս, հրավերների մի ամբողջ շարան է։ Ի՞նչ մարդիկ են,— ասացի ես։

— Նրանք «սուրբ թռչկոտողները» չե՞ն, չէ՞,— ասաց նա։

182 — Չգիտեմ, թե դա ինչ «թռկոտողներ» են, բայց նրանք ունեն մի բան, ինչի կարիքը ես ունեի,— ասացի ես։ Հասկանո՞ւմ եք։ Ես ասացի. «Դա, դա մի բան է, որում ես համոզված եմ»։ Ասացի. «Ես տեսա, թե ինչպես իննսունամյա տարեց տղամարդը նորից երիտասարդացավ»։ Ասացի. «Ես այդպիսի քարոզներ երբեք չեմ լսել իմ կյանքում։ Ես երբեք չեմ տեսել, որ մկրտականը նման ձևով քարոզի»։ Ասացի. «Նրանք քարոզում են մինչև շունչի կտրվելը, ընկնում են ծնկների վրա, նորից վեր են ցատկում՝ շունչ քաշելու համար։ Երկու թաղամաս այն կողմ լսվում է, թե ինչպես են նրանք քարոզում»։ Եվ ասացի. «Այդպիսի բան ես երբեք չեմ լսել իմ կյանքում»։ Եվ ասացի. «Նրանք խոսում են օտար լեզուներով, իսկ մյուսը պատմում է, թե նրանք ինչ էին ասում։ Այդպիսի բան ես երբեք չեմ լսեմ իմ կյանքում»։ Հարցրեցի. «Դու կգա՞ս ինձ հետ»։

183 — Սիրելի՛ս, երբ ես ամուսնացա քեզ հետ, հարեցի քեզ այնքան ժամանակ, մինչև մահը կբաժանի մեզ,— ասաց նա։ — Ես կգամ,— ասաց նա։— Հիմա մենք կպատմենք ժողովրդին։

184 — Լավ, դու քո մայրիկին ասա՛, ես էլ իմ մայրիկին կասեմ,— ասացի ես։ Եվ այսպես մենք...Ես գնացի և պատմեցի մայիկին։

185 — Լավ, իհարկե, Բիլլի,— ասաց մայրիկը։— Ինչի համար էլ, որ Տերը քեզ կանչած լինի անելու, գնա՛ և արա՛ այդ։

186 Եվ այսպես տիկին Բրումբախը խնդրեց, որ ես գնամ նրա մոտ։ Ես գնացի։ Նա ասաց. «Ինչի՞ մասին ես խոսում»։

187 — Ո՛հ, տիկին Բրումբախ,— ասացի ես,— դուք այդպիսի մարդիկ երբեք չէք տեսել։

— Հանգստացի՛ր։ Հանգստացի՛ր։

— Այո՛, տիկին,— ասացի ես։— Ներողություն։

— Դու գիտե՞ս, որ նրանք «սուրբ թռչկոտողներ» են,— ասաց նա։

188 — Ո՛չ, տիկին, ես դա չգիտեի,— ասացի ես։— Նրանք, նրանք անկասկած հրաշալի մարդիկ են։

189 — Սա ի՞նչ գաղափար է։ Դու մտածում ես, որ իմ աղջկան քարշ կտաս այնտե՞ղ,— ասաց նա։ — Ծիծաղելի՞ է։ Դրանք ոչ այլ բան են, քան աղբակույտ, որոնց դուրս են շպրտել մյուս եկեղեցիներից։ Իսկապե՛ս։ Դու իմ աղջկան ոչ մի տեղ էլ չես տանի։

190 — Բայց գիտե՞ք տիկին Բրումբախ,— ասացի ես,— իմ սրտի խորքում ես զգում եմ, որ Աստված ցանկանում է, որ ես գնամ այդ մարդկանց հետ։

191 — Վերադարձի՛ր քո եկեղեցին և մնա այնտեղ, մինչև նրանք քեզ հատկացնեն հովվական տուն, և վարվիր ինչպես առողջ տրամաբանությամբ մարդ։— Դու իմ աղջկան քարշ չես տա այնտեղ։

— Այո՛, տիկին,— ասացի ես։ Ես շրջվեցի և դուրս եկա։

192 Հոուփը սկսեց լաց լինել։ Նա դուրս եկավ, ասաց. «Բիլլի՛, անկախ այն բանից, թե մայրիկն ինչ է ասում, ես քեզ հետ կլինեմ»։ Օրհնյալ լինի նրա սիրտը։

— Ո՛հ, ամեն ինչ կարգին է, սիրելիս,— ասացի ես։

193 Եվ ես ուղղակի մոռացության մատնեցի դա։ Նա թույլ չէր տալիս, որ նրա աղջիկը գնա այդպիսի մարդկանց հետ, որովհետև «դա ոչ այլ բան էր, քան հիմարություն»։ Ես ուղակի մոռացության մատնեցի դա։ Դա իմ կյանքում գործած ամենավատ՝ ամենավատ սխալներից մեկն էր։

194 Շատ չանցած՝ մի քանի տարի հետո հայտնվեցին երեխաները։ Եվ մի օր մենք...1937 թվականին տեղի ունեցավ ջրհեղեղ։ Ջրհեղեղ եղավ։ Եվ մեր...Այդ ժամանակ ես պարեկության էի, և ամեն հնարավոր բան անում էի՝ մարդկանց հեղեղից դուրս բերելու համար, տները քանդվում էին։ Իսկ իմ սեփական կինը հիվանդ էր, և նա, իրոք, թոքերի բորբոքումով էր հիվանք։ Նրան տարան... Սովորական հիվանդանոցն այնքան էր լեփլեցուն, որ մենք չկարողացան պառկեցնել նրան այնտեղ, դրա համար նրան տարանք պետական հիվանդանոց, որտեղ նրանք տեղ ունեին։ Եվ այդ ժամանակ նրանք նորից կանչեցին ինձ։ Ես միշտ գետի վրա եմ ապրել, լավ նավավար էի, ուստի ես փորձում էի գտնել մարդկանց,

փրկել նրանց հեղեղի բերանից։ Եվ այդ ժամանակ ես... մի...

195 Նրանք կանչեցին ինձ, ասացին. «Չեստնատ փողոցի վրա մի տուն կա, որն ուր էր հայտնվելու է ջրի տակ։ Այնտեղ մայր և մի խումբ երեխաներ կան,— ասացին,— եթե կարծում ես, որ քո նավակը, քո շարժիչը կարող է հասնել նրանց»։

— Ես հնարավոր ամեն բան կանեմ,— ասացի ես։

196 Եվ ես սահում էի այդ ալիքների միջով։ Ամբարտակը այնտեղ արդեն քանդվել էր, և, ո՜հ...քաղաքն ուղղակի սրբում տանում էր։ Ես ամբողջ ուժով սլանում էի, որքան կարող էի, և վերջապես նրբացնքներով ու վայրերով հասա այնտեղ։ Եվ ես հասա այնտեղ, որտեղ գտնվում էր հին ամբարտակը, ջուրը հոսում էր միջով։ Ականջիս հասավ ինչ-որ մեկի գոռոցը, և ես տեսա մորը՝ ճակատամուտքին կանգնած։ Հսկայական ալիքներ էրն գալիս։ Եվ *այսպես*, ես շրջանցեցի, անցա հոսանքը, վերադարձա և մտա այն կողմից։ Ես կանգնեցրի իմ նավակը ճիշտ այն պահին, որ կապեմ այն սյանը, դռան սյունին կամ շքամուտքի սյանը։ Ես ներս վազեցի, բռնեցի մորը և դուրս հանեցի, և երկու թե երեք երեխաներին։ Նավակն արձակեցի և հասցրի նրան...հետ։ Դուրս եկա հոսանքով ներքև և հասցրի նրան ափ, մոտ մեկուկես մղոն ամբողջ քաղաքով, մինչև նրան ափ հասցրի։ Երբ հասանք այնտեղ նա ուշագնաց եղավ։ Եվ նա սկսեց... բղավում էր. «Երեխա՜ս։ Երեխա՜ս»։

197 Դե, ես կարծեցի, թե նա նկատի ունի, որ երեխային թողել է այդ տան մեջ։ Ո՜հ, Աստված իմ։ Մինչ նրանք իրեն ուշքի էին բերում, ես նորից վերադարձա։ Եվ ես պարզեցի, որ դա...կամ էլ ուզում էր իմանալ, թե որտեղ էր իր երեխան։ Այդ երեխան երեք տարեկանի մոտ էր, և ես մտածեցի, թե ինքը նկատի ունի կրծքի երեխա կամ նման մի բան։

198 Եվ այսպես ես շրջվեցի և հասա այնտեղ։ Երբ նավակը կապեցի և ներս մտա, ոչ մի երեխա չկարողացա գտնել, և շքամուտքը ճոճվեց և տունը սկսեց փլվել։ Ես շատ արագ վազեցի և բռնվեցի այն կտորից, որի հետ հոսանքով տարվում էր իմ նավակը, մտա նավակի մեջ, քաշեցի և արձակեցի այն։

199 Այդ ժամանակ հեղեղը ինձ գշեց տարավ գլխավոր գետի հոսքի մեջ։ Դա գիշերվա մոտ տասնմեկ անց կես

էր, ձյունախառն անձրև էր գալիս։ Ես բռնեցի ստարտերի լարը և փորձեցի աշխատացնել շարժիչը, բայց այն գործի չէր ընկնում, ես նորից ու նորից էի փորձում, բայց շարժիչը առաջվա նման գործի չէր ընկնում։ Հեղեղը ինձ ավելի հեռու քշեց տարավ այդ հոսանքի մեջ, առջևում ջրվեժն էր։ Ես ամբողջ ուժով փորձում էի, և ես մտածեցի. «Ո՛հ, Աստված իմ, ահա, ահա և իմ վերջը։ Վերջս եկավ»։ Եվ ես ամբողջ ուժով փորձում էի։ Ես ասացի. «Տե՛ր, խնդրում եմ, թույլ մի՛ տուր ինձ նման մահով մեռնել», և ես քաշում ու քաշում էի։

200 Եվ միտքս եկավ. «Իսկ ի՞նչ կասես այդ թափթփուկների խմբի մասին, որ չգնացիր»։ Հասկանո՞ւմ եք։ Ըհը։

201 Ես ձեռքով հենվեցի նավակի վրա և ասացի. «Տե՛ր, ողորմի՛ր ինձ։ Թույլ մի՛ տուր, որ այսպես թողնեմ կնոջս և երեխայիս, նրանք այնտեղ հիվանդ են։ Խնդրում եմ»։ Եվ ես պարզապես շարունակում էի լարը այդպես քաշել, բայց ոչինչ տեղի չէր ունենում։ Ներքևում լսում էի ջրվեժի դղրդոցը, որովհետև ես...Ընդսամենը մի քանի րոպե և, ո՛հ, վերջն էր։ Եվ ես ասացի. «Տե՛ր, եթե Դու ներես ինձ, խոստանում եմ, որ ես կանեմ ամեն ինչ»։ Ծնկի էի եկել այնտեղ՝ այդ նավակի մեջ և ձյունախառն անձրևը խփում էի դեմքիս։ Ես ասացի. «Ես կանեմ ամեն ինչ, ինչ Դու կցանկանաս»։ Ես լարը նորից քաշեցի և այն գործի ընկավ։ Ես սեղմեցի գազը մինչև վերջ և վերջապես հասա ափ։

202 Եվ ես հետ գնացի, որ գտնեմ բեռնատարը՝ պարեկային բեռնատարը։ Եվ ես մտածեցի...Այնտեղ ոմանք ասացին. «Պետական հիվանդանոցն ուղղակի սրբել-տարել է»։ Կինս և երեխաս այնտեղ էին, երկու երեխաներս։

203 Ես նետվեցի դեպի կառավարական, ջրի խորությունը հասնում էր մոտավորապես տասնհինգ ոտնաչափի։ Այնտեղ մի մայոր կար, որին ես հարցրի. «Մայո՛ր, հիվանդանոցի հետ ի՞նչ է եղել»։

— Մի՛ անհանգստացեք,— ասաց նա։— Դուք այնտեղ որևէ մեկին ունե՞ք։

— Այո, հիվանդ կին և երկու երեխաներս։

204 — Նրանք բոլորը փրկվել են— ասաց նա։— Նրանք բեռնատար վագոնում են և ուղարկվել են դեպի Չարլզթաուն։

205 Ես վազեցի, նստեցի նավակը և...ավելի ճիշտ, մեռքենան, հետևից նավակն ամրացրի և սլացա այնտեղ...Իսկ հետո այդ գետի ջրերը տարածվել էին մոտ երկուսուկես կամ երեք մղոն լայնության վրա: Եվ ողջ գիշեր շարունակ ես փորձում էի...Նրանցից ոմանք ասում էին. «Վագոնը, բեռնատար վագոնը քշել տարել է վազքուղու վրայից»:

206 Ես հայտնվեցի մի փոքրիկ կղզում, ես երեք օր մնացի այնտեղ: Ես բավականաչափ ժամանակ ունեի մտածելու այն մասին, թե արդյոք Նրանք «թափթփուկ» էին, թե՞ ոչ: Պարզապես տանջվում էի. «Որտե՞ղ է հիմա իմ կինը»:

207 Վերջապես, մի քանի օրից, երբ ես գտա նրան, այն բանից հետո, երբ դուրս եկա և տեղափոխվեցի, նա Կոլոմբոսում էր՝ Ինդիանայի նահանգում, մկրտչական լսարանում, որը վերափոխել էին հիվանդանոցի՝ հիվանդասենյակներ փոքր պետական մահճակալների վրա: Ես ամբողջ ուժով վազեցի նրա մոտ, փորձելով գտնել, թե որտեղ է նա, գոռում էի. «Հոո՛ւփ, Հոո՛ւփ, Հոո՛ւփ»: Նայեցի և ահա նա պառկած էր ծալովի մահճակալին, թոքաղտով:

Նա բարձրացրեց իր նիհարիկ ձեռքը և ասաց. «Բիլլի՛»:

Ես վազեցի նրա մոտ և ասացի. «Հոուփ, սիրելիս»:

— Ես սարսափելի տեսք ունեմ, չէ՞:

— Ո՛չ, սիրելիս, դու լավ տեսք ունես:

208 Մոտ վեց ամիս մենք անում էինք ամեն ինչ նրա կյանքը փրկելու համար, բայց նրա վիճակը գնալով ավելի ու ավելի էր վատանում:

209 Մի օր ես պարեկություն էի անում, ռադիոն միացրել էր, և ես լսեցի, թե ինչպես նրանք ասացին՝ կոչ հաղորդվեց ռադիոյի միջոցով, ասացին. «Դիմում ենք Ուիլլիամ Բրանհամին, անհապաղ մոտեցե՛ք հիվանդանոց, ձեր կինը մահանում է»: Ես հետ սլացա հինավդանոց, միացրի կարմիր լույսն ու ազդանշանը և սլացա: Եկա հիվանդանոց, կանգ առա, վազեցի ներս: Հիվանդանոցով ներքև իջնելիս, տեսա իմ ընկերներից մեկին՝ Սեմ Էդերին, ում հետ միասին ձկնորսություն էինք անում, դեռ երեխա ժամանակներից միասին էին վազում:

210 Բժիշկ Սեմ Էդերը նա է, ով վերջերս տեսիլքում էր և նրան ասվեց կլինիկայի մասին: Նա ասաց, որ եթե ինչ-որ մեկը կասկածում է այդ տեսիլքի վերաբերյալ, թող նրան

հարցնեն, եթե ուզում եք իմանալ, թե արդյո՞ք դա ճիշտ է, թե՞ ոչ։

211 Եվ ահա նա այդպես դուրս եկավ, և նրա գլխարկը ձեռքին էր։ Նայեց ինձ և սկսեց լաց լինել։ Ես վազեցի նրա մոտ և գրկեցի նրան։ Նա փաթաթվեց ինձ, ասաց. «Բի՛լլի, նա մահանում է»։ Նա ասաց. «Ցավում եմ։ Ես արեցի ամենը, ինչ կարող էի։ Ես գտել էի մասնագետներ և ամեն բան»։

— Սե՛մ, իհարկե, նա չի մահանա։

— Նա մահանում է,— ասաց նա։— Մի՛ մտիր այնտեղ, Բիլլի։

— Ես պիտի մտնեմ, Սեմ։

— Մի՛ արա դա,— ասաց նա։— Մի՛ արա, խնդրում եմ, մի՛ արա։

— Թո՛ւյլ տուր մտնեմ։

— Ես կգամ քեզ հետ։

212 — Ո՛չ, դու մնա այստեղ,— ասացի ես։— Նրա վերջին րոպեներին ես ուզում եմ նրա հետ մնալ։

— Նա գիտակցությունը կորցրած է։

213 Ես մտա հիվանդասենյակ։ Բուժքույրը նստած էր այնտեղ և լաց էր լինում, որովհետև ինքն ու Հոուփը դասընկերուհիներ էին։ Ես նայեցի, և նա սկսեց լաց լինել, դեմքը ձեռքով փակեց։ Նա վեր կացավ և հեռացավ։

214 Ես նայեցի, և թափահարեցի նրան։ Եվ ահա նա. նա մոտավորապես քաշի կեսը կորցրել էր։ Եվ ես, ես ցնցեցի նրան։ Եթե ես մինչև հարյուր տարեկան էլ ապրեմ, երբեք չեմ մոռանա կատարվածը։ Նա շուռ եկավ և այդ խոշոր, գեղեցիք աչքերը նայեցին ինձ։ Ժպտած։ Ասաց. «Ինչո՞ւ դու ինձ հետ կանչեցիր, Բի՛լլի»։

— Սիրելի՛ս, ինձ հենց նոր հայտնեցին։

215 Ես ուղղակի ստիպված էի աշխատել։ Մենք պարտքերի մեջ կորած էինք, բժիշկների հաշվին հարյուրավոր դոլարների պարտք ունեինք, և վճարելու ոչ մի հնարք։ Եվ ես ուղղակի ստիպված էի աշխատել։ Ես նրան երկու թե երեք անգամ էի տեսնում օրավա մեջ, և ամեն գիշեր, այն ժամանակ, երբ նա այդ վիճակում էր։

— Ի՞նչ նկատի ունես ասելով՝ «Քեզ հետ կանչեցի»,— հարցրեցի ես։

216 — Բիլլ, դու քարոզել, դու խոսել ես Դրա մասին, բայց դու պատկերացում անգամ չունես, թե դա ինչ է։

— Ինչի՞ մասին ես դու խոսում։

217 — Երկնքի։ — Տե՛ս,— ասաց նա,— ինձ Տուն էին ուղեկցում ինչ-որ մարդիկ՝ տղամարդիկ և կանայք և էլի ինչ-որ մարդիկ։ Նրանք ճերմակ հանդերձներով էին։ Ես հանգիստ ու խաղաղ էի,—ասաց նա։— Մեծ, չքնաղ թռչունները թռչում էին ծառից ծառ։ — Չմտածես, թե ես խելքս թոցրել եմ— ասաց նա։— Բի՛լլի, ես կասեմ քեզ մեր սխալը։ Նստի՛ր,— ասաց նա։ Ես չնստեցի, ծնկի եկա և նրա ձեռքը առա ափերիս մեջ։— Գիտե՞ս, թե մեր սխալն ինչում էր։

— Այո՛, սիրելիս, գիտեմ։

218 — Մենք չպետք է մայրիկին լսեինք։ Այդ մարդիկ իրավացի էին։

— Գիտեմ։

219 — Խոստացի՛ր ինձ սա, որ դու կգնաս այդ մարդկանց մոտ,— ասաց,— որովհետև նրանք իրավացի են։ — Դաստիարակի՛ր մեր երեխաներին այդ ձևով։ Եվ ես...— Ես ուզում եմ քեզ մի բան ասել,— ասաց նա։ — Ես մեռնում եմ, բայց,— ասաց նա,— դա...Ես մեռնելուց չ-չեմ վախենում,— ասաց,— դա, դա հրաշալի է։ — Մի բանի համար եմ ցավում, որ ես քեզ թողնում եմ Բիլլ։ Գիտեմ նաև, որ դու պիտի մեծացնես այդ երկու փոքրիկ երեխաներին։ Խոստացի՛ր ինձ, որ, որ դու միայնակ չես մնա և թույլ չես տա, որ իմ երեխաները՝ անգործ թափառեն։ Քսանմեկ տարեկան մոր համար դա տրամաբանական էր։

— Ես չեմ կարող դա խոստանալ, Հոուփ։

220 — Խնդրում եմ, խոստացիր ինձ,— ասաց նա։— Մի բան եմ ուզում քեզ ասել։ Դու հիշո՞ւմ ես այն հրացանը։ Ես ուղղակի խենթանում եմ հրացանների համար։ Եվ նա ասաց. — Այն օրը դու ուզում էիր գնել այն, բայց բավականաչափ փող չունեիր կանխավճարը կատարելու համար։

— Այո՛։

221 — Ես իմ փողը՝ իմ ցենտերը խնայում էի, որ հավաքեմ այդ հրացանի սկզբնական մուծումը քեզ համար։ Երբ այս ամենը վերջանա և դու վերադառնաս տուն, նայիր երկտեղանոց...այսինքն՝ ծալովի մահճակալին, և այնտեղ՝

թղթի կտորի տակ, դու կգտնես գումարը։ Խոստացիր ինձ, որ դու այդ հրացանը կգնես։

222 Դուք չեք կարող պատկերացնել, թե ես ինչ էի զգում՝ այդ 25 ցենտերը (նիկելները) այնտեղ տեսնելիս։ Ես գնեցի հրացանը։

223 — Հիշո՞ւմ ես այն ժամանակ, երբ դու գնացիր քաղաք՝ ինձ համար գուլպաներ գնելու,— ասաց նա,— մենք գնում էինք Ֆորտ-Ուեյն։

— Այո։

224 Ես ձկնորսությունից էի վերադարձել և նա ասաց... Մենք պիտի գնայինք Ֆորտ-Ուեյն, ես պիտի քարոզեի այդ երեկո։ — Գիտես, ես քեզ ասել էի, որ նրանք երկու տեսակ են լինում։ Մեկը կոչվում էր «շիֆոն»։ Իսկ մյուսն ինչպե՞ս է կոչվում «կապրոն»։ Ճի՞շտ է։ Կապրոն և շիֆոն։ Ինչ-որ շիֆոնն ամենալավն էր։ Ճի՞շտ է։ Եվ նա ասաց. «Դու ինձ համար գնիր շիֆոնի գուլպաներ, «ոճավոր»»։ Գիտե՞ք, այդ գուլպաների վրա հետևից այսպիսի բաներ են գնում ներքևից վերև։ Իսկ ես կանացի հագուստից բան չէի հասկանում, դրա համար ես...

225 Ես փողոցով իջնում էի և անդադար կրկնում. «Շիֆոն...շիֆոն...շիֆոն...շիֆոն...», որ չմոռանամ «շիֆոն...շիֆոն...շիֆոն...»։

Ինչ-որ մեկն ասաց. «Ողջո՛ւյն, Բիլլի»։

226 — Ո՛հ, ողջույն, ողջույն,— ասացի ես։— Շիֆոն... շիֆոն...շիֆոն...շիֆոն...շիֆոն...։

227 Հասնելով մինչև անկյուն հանդիպեցի պարոն Սփոնին։ — Բիլլի՛, դու գիտե՞ս, որ հիմա ամբարտակի այն կողմը պերկեսները խփում են,— ասաց նա։

— Դու վստա՞հ ես։ Ճի՞շտ է դա։

— Այո՛։

Նրան լքելուց հետո, ես մտածում էի. «Ի՞նչ էր դրա անունը»։ Մոռացա։

228 Այսպիսով Թելմա Ֆորդը՝ մի աղջիկ, ում ես ճանաչում էի, աշխատում էր հանրախանութում։ Ես գիտեի, որ նրանք այնտեղ կանացի գուլպաներ էին վաճառում, դրա համար ես գնացի այնտեղ։ Ես ասացի. — Ողջո՛ւյն, Թելմա։

— Ողջույն, Բիլլի։ Ո՞նց ես։ Ինչպե՞ս է Հոուփը։

229 — Շատ լավ է,— ասացի ես։— Թելմա՛, ինձ կիսագուլպաներ են պետք Հոուփի համար։

— Բայց Հոուփին պետք չեն կիսագուլպաներ։

— Պետք են, օրիորդ, նրան պետք են։

— Դու նկատի ունես գուլպաներ։

230 — Ո՛հ, հաստատ,— ասացի ես,— հենց դա էլ ուզում էի։ Մտածեցի. «Ո՛հ, ես փայլեցի իմ տգիտությամբ»։

— Ի՞նչ գուլպաներ են նրան պետք։

— Ո՛հ,— մտածեցի ես։— Իսկ դուք ի՞նչ ունեք։

— Դե, մենք կապրոն ունենք։

231 Ես չգիտեի տարբերությունը։ Կապրոն, շիֆոն, երկուսն էլ հնչում են նույն ձևով։ Ասացի. «Դա հենց այն է, ինչ ինձ պետք է»։ Նա ասաց…Ես ասացի. «Դրանցից մի զույգ փաթեթավորիր, «ոճավորներից»»։ Եվ նա…Ես սխալ էի ասել։ Ինչպե՞ս է դա։ Ոճավոր։ «Ոճավոր»։ Եվ այսպես ես ասացի. «Դրանցից մի զույգ փաթաթիր ինձ համար»։

232 Եվ երբ նա տվեց դրանք ինձ, պարզվեց, որ դրանք ընդամենը երեսուն ցենտ էին, քսան թե երեսուն ցենտ են, մոտ կես գին։ Այդ դեպքում ես ասացի. «Ինձ երկու զույգ տուր դրանցից»։ Հասկանո՞ւմ եք։

233 Ես վերադարձա տուն և ասացի. «Գիտե՞ս, սիրելիս, դուք՝ կանայք շրջում եք քաղաքի բոլոր խանութները՝ զեղջեր գտնելու համար»։ Գիտեք, թե ինչպես եք սիրում պարծենալ դրանով։ Ասացի. «Բայց ահա՛ նայի՛ր այստեղ, ես երկու զույգ գուլպա գնել եմ նույն գնով, ինչով որ դու գնում ես մեկը։ Տեսնո՞ւմ ես»։ Ասացի. «Ո՛հ, դա, դա իմ անձնական հմտությունների շնորհիվ է»։ Հասկանո՞ւմ եք։ Ես ասացի, ասացի. «Գիտե՞ս, Թելման է դրանք վաճառել ինձ»։ Ասացի. «Նա ինձ սրանք զիջեց կես գնով»։

— Դու շիֆո՞ն ես գնել։

234 — Այո՛, տիկին։ Ինձ համար բոլորն էլ նույն ձևով էին հնչում։ Չգիտեի, որ դրանց միջև տարբերություն կար։

235 Եվ նա ինձ պատմեց, ասաց. «Բի՛լլի»։ Ինձ տարօրինակ թվաց, որ երբ մենք եկանք Ֆորտ–Ուեյն, նա ևս մի զույգ գուլպաներ գնեց։ «Ես դրանք տվեցի քո մայրիկին,— ասաց նա,— այն գուլպաները տարեց կանանց համար էին»։ Ասաց. «Ես զղջում եմ, որ արեցի դա»։

Եվ ես ասացի. «Ո՛հ, ամեն ինչ կարգին է, սիրելի՛ս»։

236 Եվ նա ասաց. «Հիմա մի՛, մի՛ ապրիր միայնակ»։ Եվ նա ասաց…Նա չգիտեր, թե դրանից մի քանի ժամ հետո ինչ

է լինելու: Ես բռնել էի նրա քնքուշ ձեռքերը, մինչ Աստծո հրեշտակները տանում էին նրան:

237 Ես տուն գնացի: Չգիտեի ինչ անել: Գիշերը պառկեցի այնտեղ և լսեցի...Կարծում եմ դա փոքրիկ մի մուկ էր, հին բուխարիի սալիկի մեջ էր, որտեղ մենք որոշ թղթեր ունեինք: Ես ոտքով փակեցի խոհանոցի դուռը, իսկ այնտեղ՝ դռան հետևում, կախված էր նրա խալաթը (իսկ ինքը պառկած էր այնտեղ՝ այդ դիարանում): Շատ չանցած ինչ-որ մեկը կանչեց ինձ, ասաց. «Բի՛լլի»: Դա եղբայր Ֆրանկ Բրոյն էր: Նա ասաց. «Ձեր երեխան մահանում է»:

Ես ասացի. «Իմ երեխա՞ն»:

238 — Այո, Շարոն Ռոուզը: Բժիշկը հիմա այնտեղ է,— ասաց,— նա թոքաղտային մենինգիտ ունի, իր մորից է վարակվել կերակրման ճանապարհով»: Եվ ասաց. «Նա մահանում է»:

239 Ես մեքենա նստեցի և գնացի այնտեղ: Եվ ահա նա՝ իմ քաղցր փոքրիկ էակս: Նրան արագ տեղափոխել էին հիվանդանոց:

240 Ես գնացի նրան տեսնելու: Սեմը մոտեցավ, ասաց. «Բի՛լլի, մի՛ գնա այդ սենյակ, դու պիտի մտածես Բիլլի Փոլի մասին»: Ասաց. «Նա մահանում է»:

— Բժի՛շկ, ես, ես պիտի տեսնեմ իմ երեխային:

241 — Ոչ, դու չես կարող ներս մտնել,— ասաց նա,— նրա մոտ մենինգիտ է Բիլլի, և դու դա կփոխանցես Բիլլի Փոլին:

242 Եվ ես սպասեցի, մինչև նա դուրս եկավ: Ես չէի կարող կանգնել և տեսնել, թե ինչպես էր նա մահանում, իսկ նրա մայրը պառկած է այնտեղ՝ Թաղման բյուրոյում: Ես ձեզ ասեմ, հանցավորի ճանապարհը դժվար է: Եվ ես, ես գնացի՝ սայթաքեցի դռան միջով և երբ Սեմն ու բուժքույրը դուրս եկան, իջա նկուղ: Դա փոքրիկ հիվանդանոց էր: Նա մեկուսարանում էր և ճանճերը նստել էին նրա աչուկների վրա: Նրանք ունեին փոքրիկ... մենք դա կոչում ենք «մոծակների ցանց», այսինքն՝ փոքրիկ ցանց գցած նրա աչքերի վրա: Եվ նա ուներ... ջղաձգումներից նրա փոքրիկ թմբլիկ ոտքն ու թաթիկները այսպես վերև ու ներքև էր շարժվում, ջղաձգումից: Ես նայեցի նրան, և նա արդեն բավականին մեծ ու խելացի էր, մոտ ութ ամսեկան էր:

243 Եվ նրա մայրիկը սովորություն ուներ նստեցնել նրան այնտեղ՝ բակում, փոքրիկ բարուրի մեջ, գիտեք, երբ ես վերադառնում էի: Եվ ես փող էի փչում և նա «գու–գու, գու–գու» էր անում՝ ձգվելով դեպի ինձ, գիտեք:

244 Եվ ահա այնտեղ իմ սիրելին պառկած՝ մահանում էր: Ես կռացա նրա վրա և ասացի. «Ծարո՛ն, դու ճանաչո՞ւմ ես հայրիկին: Դու ճանաչո՞ւմ ես ինձ, Ծարո՛ն»: Եվ երբ նա նայեց…Նրա տառապանքներն այնքան ծանր էին, որ նրա չքնաղ կապույտ աչուկները ծռվել էին: Սիրտս պատռվում էր:

245 Ես ընկա ծնկների վրա, ասացի. «Տե՛ր, ի՞նչ եմ ես արել: Մի՞թե ես չեմ քարոզել Ավետարանը փողոցի անկյուններում: Ես արել եմ ամեն բան, ինչ գիտեի, որ պիտի անեմ: Մի՛ պահիր դա իմ դեմ: Ես այդ մարդկանց երբեք «թափթփուկներ» չեմ անվանել: Այդ նա է նրանց «թափթփուկներ» անվանել»: Ասացի. «Ես ցավում եմ կատարվածի համար: Ների՛ր ինձ: Մի՛, մի՛ վեր առ իմ երեխային»: Եվ մինչ ես աղոթք էի անում, կարծես սև… սավանի կամ կտորի նման բան իջավ: Ես հասկացա, որ Նա մերժեց ինձ:

246 Դա իմ կյանքի ամենածանր և ամենանենգ ժամանակաշրջանն էր: Երբ վեր կացա և նայեցի նրան, մտածեցի…Սատանան դրեց դա իմ մտքում. «Դու ամբողջ ուժով քարոզում էիր և նույն ձևով էլ ապրում էիր, իսկ հիմա, երբ գործը հասավ քո սեփական երեխային, Նա մերժե՞ց քեզ»:

247 Ես ասացի. «Ճիշտ է: Եթե Նա չի կարող փրկել իմ երեխային, ապա ես էլ չեմ կարող…»: Ես կանգ առա: Ես, ես ուղղակի չգիտեի ինչ անել: Եվ այդ ժամանակ ես ասացի սա. «Տե՛ր, Դու էիր ինձ նրան տվել, Դու էլ վերցրեցիր. Տիրոջ Անունը օրհնյալ լինի: Եթե նույնիսկ ինձ վերցնես, ես էլի Քեզ կսիրեմ»:

248 Եվ ես իմ ձեռքը դրեցի նրա վրա և ասացի. «Օրհնում եմ քեզ, անուշիկս: Հայրիկը ցանկանում էր մեծացնել քեզ, ես իմ ողջ սրտով կուզեյի դաստիարակել, մեծացնել քեզ, որ սիրես Տիրոջը: Բայց Հրեշտակները հիմա գալիս են քո հետևից, անուշիկս: Հայրիկը կվերցնի քո փոքրիկ մարմինը և կդնի այն մայրիկի ձեռքերի վրա: Ես կթաղեմ քեզ նրա հետ: Մի օր հայրիկը կհանդիպի քեզ, դու պարզապես մայրիկի հետ սպասելիս կլինես այնտեղ»:

249 Երբ նրա մայրը մահանում էր, նա ասաց, սրանք

էին նրա վերջին խոսքերը, որոնք նա ասաց. «Բի՛լլ, մնա մարտադաշտում»:

250 Ես ասացի. «Ես...»: Նա ասաց...Ես ասացի. «Եթե ես դաշտում լինեմ, երբ Նա գա, մենք երեխաների հետ կհանդիպենք: Իսկ եթե ոչ, ինձ կթաղեն քո կողքին: Դու կգնաս այն մեծ դարպասի աջ կողմում կկանգնես, և երբ տեսնես նրանց բոլորին ներս մտնելիս, կանգնիր այնտեղ և հնարավորինս բարձր գոռա. «Բի՛լլ, Բի՛լլ, Բի՛լլ»: Ես կհանդիպեմ քեզ այնտեղ»: Ես նրան հրաժեշտի համբույր տվեցի: Այսօր ես մարտի դաշտում եմ: Դա մոտ քսան տարի առաջ էր: Ես ժամադրվեցի իմ կնոջ հետ և ես կհանդիպեմ նրան:

251 Եվ երբ փոքրիկս մահացավ ես վերցրեցի նրան և դրեցի մայրիկի ձեռքերի վրա, և մենք տարանք նրան գերեզմանոց: Եվ ես կանգնել էի այնտեղ և լսում էի, թե ինչպես էր եղբայր Սմիթը՝ մեթոդիստական քարոզիչը թաղմանը քարոզում. «Մոխիրը՝ մոխրին, հողը՝ հողին»: (Եվ ես մտածեցի. «Իսկ սիրտը՝ սրտին») Նա գնաց այնտեղ:

252 Դրանից շատ չանցած, ես մի առավոտ վերցրեցի փոքրիկ Բիլլիին այնտեղ: Նա ընդամենը փոքրիկ ընկեր էր: Նա...

253 Այդ է պատճառը, որ նա կպած ինձ, ես էլ՝ նրան, որովհետև ես պիտի նրա համար լինեի և՛ հայրիկ, և՛ մայրիկ (երկուսը միաժամանակ): Ես նրա փոքրիկ շիշը վերցնում էի ինձ հետ: Մենք գիշերները մեզ չէինք կարող կրակ թույլ տալ՝ նրա կաթը տաք պահելու համար, և ես շիշը դնում էի այդպես իմ մեջքի տակ, և իմ մարմնի ջերմությունով տաք էի պահում այն:

254 Մենք նրա հետ ընկերների նման էինք, և օրերից մի օր, երբ ես ասպարեզից հեռանամ, ուզում եմ Խոսքը նրան հանձնել և ասել. «Ծարունակի՛ր, Բիլլի: Մնա՛ Դրա հետ»: Որոշ մարդիկ զարմանում են, թե ես ինչու եմ նրան միշտ իմ հետ վերցնում: Որովհետև չեմ կարող թողնել նրան: Նա նույնիսկ ամուսնացած է, բայց ես դեռևս հիշում եմ նրա մոր ասածը. «Մնա՛ նրա հետ»: Եվ մենք ընկերների նման անբաժան ենք:

255 Հիշում եմ, քաղաքով քայլելիս՝ շիշը ձեռքիս տակ էր, Բիլլը սկսեց լաց լինել: Մի երեկո նա...նա քայլում էր հետևի բակում, որտեղ պարզապես...(Դա Բիլլի ծնվելուց առաջ էր. Հոուփը խեղդվում էր, և ես...ընդամենը աղջիկ

էր, գիտեք)։ Եվ ես հետևի բակում այդ կաղնու ճառի տակ հետ ու առաջ էի գնում։ Եվ Բիլլը լաց էր լինում իր մոր հետևից, իսկ ես չէի կարող նրան տանել մոր մոտ։ Եվ ես վերցրեցի նրան և ասացի. «Ո՛հ, սիրելի՛ս...»։ Ասացի...

256 Նա հարցրեց. «Հայրի՛կ, իսկ ո՞ւր է իմ մայրիկը։ Դու նրան դրել ես այդ հողի մե՞ջ»։

— Ոչ, սիրելիս,— ասացի ես։ —Նրա հետ ամեն բան կարգին է, նա Երկնքում է։

257 Եվ մի օր նա այնտեղ ինձ մի բան ասաց, որը քիչ էր մնում սպաներ ինձ։ Նա լաց էր լինում, ուշ երեկո էր, և ես նրան *այդպես* տանում էի իմ ուսիս վրա, տանում էի նրան ձեռքերիս վրա և ափահարում էի *այսպես*։ Եվ նա ասաց. «Հայրի՛կ, խնդրում եմ, գնա մայրիկի հետևից և բեր նրան այստեղ»։

— Սիրելի՛ս, ես չեմ կարող բերել մայրիկին։ Հիսուսը...

— Այդ դեպքում ասա՛ Հիսուսին, որ ուղարկի իմ մայրիկին։ Նա ինձ պետք է։

258 — Սիրելիս, ես...մենք մի օր կգնանք նրան այցելության։

Եվ նա կանգնեց, ասաց. «Հայրի՛կ»։

— Այո՞։

— Ես տեսա մայրիկին այ, այն ամպի վրա։

259 Ո՛հ, դա քիչ էր մնում սպաներ ինձ։ Ես մտածեցի. «Ես տեսա մայրիկին այ, այն ամպի վրա»։ Ես քիչ էր մնում ուշաթափվեի։ Ես *այդպես* սեղմեցի նրան կրծքիս և գլուխս կախ գնացի տուն։

260 Օրերն անցնում էին։ Ես չէի կարողանում դա գլխիցս հանել։ Փորձում էի աշխատել։ Չէի կարողանում տուն վերադառնալ, այն այլևս տուն չէր։ Ուզում էի մնալ։ Մենք ադ հին մաշված կահույքից բացի ոչինչ չունեինք, բաց դա մի բան էր, ինչը մենք միասին վայելում էինք։ Դա տուն էր։

261 Հիշում եմ նաև, թե ինչպես մի օր ես աշխատում էի հանրային ծառայությունում։ Ես բարձրացել էի վերանորոգելու հին երկրորդական գիծը, որը կախվել էր, դա վաղ առավոտյան էր։ Բարձրացել էի այդ սյան վրա։ (Ես չէի կարողանում մոռանալ երեխայիս։ Ես կարող էի հասկանալ իմ կնոջս մահը, բայց այդ երեխայի մահը, նա ընդամենը փոքրիկ երեխա էր)։ Եվ ես այնտեղ էի և երգում էի. «Հեռավոր բլրի վրա ինձ հին Խաչ հայտնվեց»։ Առաջնային լարը մտնում էր տրանսֆորմատոր և դուրս

էր գալիս (գիտեք) երկրորդական լարը։ Եվ ես կախված էի անտեղ՝ դրա վրա։ Ես նայեցի և ահա արևը բարձրանում էր իմ հետևից։ Ձեռքերս մեկնած էին, և բլրի լանջին ես տեսա այդ Խաչի նշանը։ Ես մտածեցի. «Այո՛, դա իմ մեղքերն ուղարկեցին Նրան այնտեղ»։

262 Ես ասացի. «Շարո՛ն, սիրելիս, հայրիկը այնքան է ցանկանում տեսնել քեզ, սիրելի՛ս։ Որքա՜ն կուզենայի նորից պահել քեզ ձեռքերումս, իմ սիրելի փոքրիկ»։ Ես խելքս կորցրել էի։ Դա շաբաթներ շարունակ էր։ Ես հանեցի իմ ոտինե ձեռնոցը։ 2300 վոլտանոց լարը գտնվում էր անմիջապես իմ կողքին։ Ես հանեցի իմ ոտինե ձեռնոցը, ասացի. «Տե՛ր, ես չեմ ուզում անել այդ։ Ես վախկոտ եմ»։ «Բայց Շարո՛ն, հայրիկն ընդամենը մի քանի րոպեից գալիս է տենելու քեզ և մայրիկին»։ Սկսեցի հանել ձեռնոցը, որ իմ ձեռքը դնեմ այդ 2300 վոլտանոց լարի վրա։ Դա կփշրեր…Նույնիսկ արյուն չէր թողնի քո մեջ։ Այսպիսով ես, ես, ես սկսեցի հանել այդ ձեռնոցը, և ինչ–որ բան կատարվեց։ Երբ ուշքի եկա, ինձ հայտնաբերեցի գետնին նստած, ձեռքերովս *այսպես* երեսս փակած՝ լաց լինելիս։ Դա Աստծո ողորմությունն էր, այլապես ես բժշկության ծառայություն չէի ունենա այստեղ։ Ես դրանում վստահ եմ։ Նա պաշտպանեց Իր պարգևը, ոչ թե ինձ։

263 Ես գնացի տուն։ Գործիքներս հավաքեցի և դադարեցի աշխատանքը։ Հետ գնացի և ասացի. «Ես գնում եմ տուն»։

264 Ես շրջանցեցի տունը և վերցրեցի փոստը, ցուրտ էր, և ես մտա ներս։ Մենք մի փոքրիկ սենյակ ունեինք, ես քնում էի փոքրիկ ծալովի մահճակալին, մոտենում էին ցրտերը, և այդ հին խոհանոցի սալօջախը։ Ես վերցրի փոստն ու նայեցի նամակները, և այնտեղ առաջին բանը, որ դրված էր, նրա Սուրբ Ծննդյան փոքրիկ խնայողությունն էր՝ ութսուն ցենտ, «Օրիորդ Շարոն Ռոուզ Բրանհամին»։ Ահա, ամեն ինչ նորից։

265 Ես որսի պահպանման տեսուչ էի։ Ես ձեռքս պարզեցի և ատրճանակը պատյանից հանեցի։ Ես ասացի. «Տե՛ր, ես, ես այլևս չեմ կարող տանել սա, ես, ես մեռնում եմ։ Ես, ես այնքան եմ տանջվում»։ Ես ատրճանակի ձգանը քաշեցի, դրեցի այն քունքիս և այդ մութ սենյակի մեջ ծնկի եկա այդ մահճակալի կողքին։ Ասացի. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, Քո անունը սուրբ լինի Քո թագավորությունը գա։ Քո կամքը լինի,— և ամբողջ ուժով ձգանը սեղմեցի, ասացի,—

ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա։ Մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր»։ Բայց այն չկրակեց։

266 Եվ ես մտածեցի. «Ո՛վ Աստված, Դու ինձ պարզապես կտոր–կտոր ես անում։ Ի՞նչ եմ ես արել։ Դու ինձ նույնիսկ մեռնել չես թույլ տալիս»։ Ես ատրճանակը դեն գցեցի, և այն ընկավ հատակին և սենյակում կրակոց հնչեց։ Ես ասացի. «Ո՛վ Աստված, ինչո՞ւ ես չեմ կարող մեռնել և ազատվել այս ամենից։ Ես պարզապես էլ չեմ կարող։ Դու պիտի մի բան անես ինձ հետ»։ Եվ ես փռվեցի իմ փոքրիկ, հին, կեղտոտ մահճակալի վրա և սկսեցի լաց լինել։

267 Եվ ես պետք է որ քնած լինեի։ Չգիտեմ արդյոք ես քնած էի, թե ոչ, կամ թե ինչ կատարվեց։

268 Ես միշտ երազել եմ լինել Արևմուտքում։ Միշտ ցանկացել եմ ունենալ այդ գլխարկներից մեկը։ Հայրիկս իր երիտասարդության տարիներին ձիավարժորդ էր և ես միշտ ցանկացել եմ ունենալ այդ գլխարկներից մեկը։ Երեկ եղբայր Դեմոս Ծաքարյանը ինձ համար մի հատ գնեց, դա իմ ունեցած (երբևէ ունեցած) առաջին գլխարկն է այդ արևմուտքի գլխարկներից։

269 Եվ ես մտածեցի, որ իջնում եմ պրերիայով, երգելով այս երգը. «Սայլի անիվը կոտրված է, ռանչոյի վրա գրված է՝ «վաճառվում է»»։ Եվ մինչ գնում էի առաջ, նկատեցի հին, ծածկոցով սայլակ, ինչպես հին գաղթականներինը, և անիվներից մեկը կոտրված էր։ Անկասկած դա ներկայացնում էր իմ քանդված ընտանիքը։ Եվ երբ ես մոտեցա, նայեցի և ահա այնտեղ կանգնած էր քսան տարեկանի մոտ շատ գեղեցիկ երիտասարդ մի աղջիկ՝ ճերմակ թափվող մազերով և կապույտ աչքերով, սպիտակ շոր հագած։ Ես նայեցի նրան, ասացի. «Բարև Ձեզ»։ Ծարունակեցի իմ ճանապարհը։

Նա ասաց. «Բարև, հայրիկ»։

270 Ես շուռ եկա, ասացի. «Հայրի՞կ»։ — Ինչո՞ւ,— հարցրեցի ես,— օրիորդ, դուք ինչպե՞ս կարող եք... ես կարող եմ լինել ձեր հայրը, եթե դուք համարյա իմ տարիքին եք։

271 — Հայրիկ, դու ուղղակի չգիտես, թե որտեղ ես գտնվում։

— Դուք ի՞նչ ի նկատի ունե՞ք։

272 — Սա Երկինքն է,— ասաց նա։— Երկրի վրա ես քո փոքրիկ Ծարոնն էի։

— Ինչպե՞ս թե,— ասաց ես,— սիրելի՛ս, դու ընդամենը փոքրիկ երեխա էիր։

273 — Հայրի՛կ, մանուկները այստեղ մանուկներ չեն, նրանք անմահ են։ Նրանք երբեք չեն ծեռանում և երբեք չեն մեծանում։

274 — Ծարո՛ն, սիրելիս, դու, դու գեղեցիկ երիտասարդ կին ես։

— Մայրիկը քեզ է սպասում։

— Որտե՞ղ։

— Վերևում՝ քո նոր տանը։

275 — Նոր տա՞նը։ Բրանհամները թափառականներ են, նրանք տներ չունեն, նրանք պարզապես...Եվ ես ասացի. «Ես երբեք տուն չեմ ունեցել, սիրելիս»։

276 — Բայց այնտեղ դու տուն ունես, հայրիկ։ Ես չեմ ուզում երեխա լինել, բայց դա ինձ համար այնքան իրական է։ [Եղբայր Բրանհամը լաց է լինում։ Ծան. Խմբ.]։ Երբ սկսում եմ մտածել դրա մասին, ամեն ինչ կենդանանում է աչքերիս առաջ։ Նա ասաց. «Դու այստեղ տուն ունես, հայրիկ»։ Ես գիտեմ, որ այնտեղ ես տուն ունեմ, մի օր ես կգնամ այնտեղ։ Նա ասաց. — Իսկ որտե՞ղ է Բիլլի Փոլը՝ իմ եղբայրը։

277 — Ես նրան թողեցի տիկին Բրոյի մոտ, ընդամենը մի քանի րոպե առաջ։

— Մայրիկը ուզում է քեզ տեսնել։

278 Եվ ես շրջվեցի և տեսա, փառահեղ մեծ ապարանք կար և Աստծո Փառքը շրջապատել էր այն։ Եվ ես լսեցի հրեշտակների երգչախմբի երգեցողությունը. «Իմ Տուն, քաղցր Տուն»։ Ես սկսեցի մեծ քայլերով բարձրանալ, ամբողջ ուժով վազում էի։ Եվ երբ հասա դռանը, ահա նա կանհնած էր այնտեղ, սպիտակ շոր էր հագաց, նրա սև երկար մազերը ծածկում էին նրա մեջքը։ Նա պարզեց իր ձեռքերը, ինչպես միշտ անում էր, երբ ես գործից կամ ինչ-որ տեղից հոգնած տուն էի գալիս։ Ես բռնեցի նրա ձեռքերը և ասացի. — Սիրելի՛ս, ես տեսա Ծարոնին այնտեղ։ Նա գեղեցիկ օրիորդ է դարձել, այնդպես չէ՞։

279 — Այո՛, Բիլլ,— ասաց նա։— Բի՛լլ։ Իր ձեռքերը դնելով իմ ուսերին (ասաց) և մեջքիս թփթփացնելով, նա ասաց. — Դադարի՛ր անհանգստանալ իմ և Ծարոնի համար։

— Սիրելիս, ես ոչինչ չեմ կարող անել դրա հետ։

280 — Ինձ ու Ծարոնի համար շատ ավելի լավ է այստեղ, քան քեզ այնտեղ։ — Այլևս չանհանգստանաս մեզ համար։ Խոստանո՞ւմ ես ինձ։

281 — Հոուփ,— ասացի,— ես այնպես եմ կարոտում քեզ ու Ծարոնին, բացի այդ, Բիլլը անընդհատ լաց է լինում քո հետևից։ Ես չգիտեմ, թե ինչ անեմ նրա հետ։

282 — Ամեն բան լավ կլինի, Բիլլ։— Միայն խոստացիր ինձ, որ դու այլևս չես անհանգստանալու։ Չե՞ս ուզում նստել։ Ես նայեցի շուրջս և այնտեղ հսկայական, մի մեծ աթոռ կար։

283 Ես հիշեցի, թե ինչպես էի փորձում աթոռ գնել։ Հիմա ավարտում եմ։ Մի անգամ ես փորձում էի աթոռ գնել։ Մենք ընդամենը հին, հասարակ փայտե հատակով աթոռներ ունեինք, նախաճաշի հավաքածու։ Մենք պիտի դրանք օգտագործեինք, մեր ունեցած միակ աթոռներն էին։ Եվ մենք կարողացանք գնել մի այնպիսի աթոռ, որտեղ կարող ես հենվել մեջքիդ վրա, ինչպես…Ես մոռացա, թե դա ինչ բազկաթոռ էր։ Նրա արժեքը 17 դոլար էր, կարող էիր սկզբնական 3 դոլարը միանգամից վճառել, իսկ հետո ամեն շաբաթ վճառել մեկ դոլար։ Եվ մենք մի հատ ձեռք բերեցինք։ Եվ, ո՛հ, երբ ես ներս էի մտնում… Ես ամբողջ օրն աշխատում էի, իսկ մինչև կեսգիշեր փողոցների անկյուններում և որտեղ կարողանում էի, քարոզում էի։

284 Եվ, և մեկ անգամ ես մուծումը չկարողացա անել։ Մենք մուծումը չկարողացանք անել, և օրերը հաջորդում էին իրար, ի վերջո նրանք եկան, վերցրեցին և իմ աթոռը տարան։ Ես այդ գիշերը երբեք չեմ մոռանա, նա ինձ համար բալի կարկանդակ էր թխել։ Խեղճը, նա, նա գիտեր, որ ես վշտացած եմ։ Ընթրիքից հետո ես ասացի. — Ինչո՞ւ ես դու այսօր այդքան բարի, սիրելի՛ս։

285 — Ես խնդրեցի հարևանի տղաներին որդ հանել։ Չես կարծո՞ւմ, որ մենք պետք է գետ գնանք և մի քիչ ձուկ բռնենք։

— Այո, բայց…

286 Եվ նա սկսեց լաց լինել։ Ես գիտեի, որ ինչ-որ բան այնպես չէ։ Ես գլխի էի ընկնում, որովհետև նրանք արդեն ծանուցում էին ուղարկել ինձ, որ գալու են տանելու այն։ Մենք չէինք կարողացել վճառել գումարը։ Մենք չկարողացանք, չ…չէինք կարողանում դա մեզ թույլ տալ։ Նա գրկեց ինձ, ես մոտեցա դռանը և իմ աթոռը չկար։

Եվ Այնտեղ նա ինձ ասաց. — Դու հիշո՞ւմ ես այդ աթոռը, Բիլլ։

— Այո, սիրելիս, հիշում եմ։

— Ահա թե ինչի մասին էիր դու մտածում, այնպես չէ՞։

— Այո։

287 — Այս մեկը նրանք չեն տանի, սրա գինը արդեն վճառված է։ — Նստի՛ր մի րոպե։ Ես ուզում եմ խոսել քեզ հետ։

— Սիրելի՛ս, ես սա չեմ հասկանում։

288 — Խոստացիր ինձ, Բիլլի, խոստացիր ինձ, որ այլևս չես անհանգստանալու։ Հիմա դու կվերադառնաս։ Խոստացիր ինձ, որ չես անհանգստանալու։

— Ես չեմ կարող խոստանալ դա, Հոուփ։

289 Եվ հենց այդ ժամանակ ես սկսեցի վերադառնալ։ Սենյակում մութ էր։ Ես նայեցի շուրջս և զգում էի ինձ վրա նրա ձեռքերը։ Ես ասացի. «Հոուփ, դու այստե՞ղ՝ սենյակում ես»։

290 Նա սկսեց թեթևակի թփթփացնել մեջքիս։ Ասաց. «Դու ինձ խոստանո՞ւմ ես, Բիլլ։ Խոստացի՛ր ինձ, որ չես ամուսնա…այլևս չես անհանգստանալու»։

— Խոստանում եմ։

291 Եվ երկու թե երեք անգամ շոյեց ինձ և վերացավ։ Ես վեր թռա, վառեցի լույսը և նայեցի ամենուր, նա վերացել էր։ Բայց նա ընդամենը սենյակից էր դուրս եկել։ Նա չի վերացել, նա հիմա էլ ապրում է։ Նա քրիստոնյա էր։

292 Որոշ ժամանակ առաջ ես ու Բիլլին գնացինք գերեզմանոց, ծաղիկներ էինք տարել նրա մոր և քրոջ համար, հենց Զատիկի առավոտյան, և մենք կանգ առանք։ Փոքրիկը սկսեց լաց լինել, նա ասաց. «Հայրի՛կ, մայրիկն այնտեղ՝ ներքևո՞ւմ է»։

293 Ես ասացի. «Ոչ, սիրելիս։ Ոչ, նա ներքևում չէ։ Քույրիկը նույնպես այնտեղ չէ։ Մենք նրանց դրեցինք այստեղ՝ գերեզմանում, բայց այնտեղ՝ ծովերի այն կողմում, որտեղ Հիսուսը հարություն է առել, այնտեղ բաց գերեզման կա։ Եվ մի օր Նա կգա։ Նա կբերի մայրիկին և քույրիկին Իր հետ»։

294 Այսօր ես մարտի դաշտում եմ, բարեկամնե՛ր։ Ես, ես ուղղակի էլ չեմ կարող խոսել…Ես…[Եղբայր Բրանհամը

լաց է լինում։ Ծան. Խմբ.]։ Աստված օրհնի ձեզ։ Մի պահ խոնարհենք մեր գլուխները։

295 Ո՜վ Տե՛ր։ Շատ անգամներ, Տե՛ր, ես վստահ եմ, որ մարդիկ չեն հասկանում, երբ մտածում են, որ այս ամենը այդքան հեշտ է։ Բայց ահա մոտենում է մեծ օր, երբ Հիսուսը կգա և բոլոր այս ցավերը կվերանան։ Երկնայի՛ն Հայր, ես խնդրում եմ, որ օգնես մեզ պատրաստվելու։

296 Եվ այդ վերջին խոստումը, երբ ես այն առավոտ համբուրեցի նրա այտը, որ ես այն օրը կհանդիպեմ նրան։ Ես հավատում եմ, որ նա կանգնած է լինելու այդ սյան մոտ, գոռալով իմ անունը։ Ես հավատարիմ եմ ապրել այդ խոստմանը, Տե՛ր, ամբողջ աշխարհում, ամեն տեսակի վայրերում փորձելով բերել Ավետարանը։ Իսկ հիմա ծերանում եմ և հոգնել եմ, ես հյուծվել եմ։ Օրերից մի օր ես փակելու եմ այս Աստվածաշունչը վերջին անգամ։ Եվ, Աստվա՛ծ, պահի՛ր ինձ այդ խոստմանը հավատրիմ։ Պահի՛ր Քո շնորհը իմ շուրջ, Տե՛ր։ Մի՛ թող որ նայեմ այս կյանքի բաներին, այլ ապրեմ այն բաների համար, որոնք վեր են։ Օգնի՛ր ինձ, որ ազնիվ լինեմ։ Ես չեմ խնդրում հեշտ, ծաղկազարդ ճանապարհներ, երբ իմ Քրիստոսը մեռավ տառապանքների մեջ։ Եվ մնացածները նույնպես մահացել են այդպես։ Ես ոչ մի հեշտ բան չեմ խնդրում։ Պարզապես թույլ տուր ինձ ազնիվ ու հավատարիմ լինել, Տե՛ր։ Թող մարդիկ սիրեն ինձ, որ ես կարողանամ առաջնորդել նրանց դեպի Քեզ։ Եվ մի օր, երբ այս ամենը վերջանա և մենք հավաքվենք ընդմիշտ դալար ծառերի տակ, ես ուզում եմ նրա ձեռքից բռնել և անցկացնել նրան, որ ցույց տամ Հրեշտակների Տաճարի մարդկանց և մնացածներին։ Դա հիանալի ժամանակ կլինի։

297 Ես աղոթում եմ, որ Քո ողորմությունը հանգչի այստեղ գտնվող մեզանից յուրաքանչյուրի վրա։ Ինչպես նաև նրանց վրա, ովքեր այստեղ են, բայց գուցե և չեն ճանաչում Քեզ, Տե՛ր։ Եվ գուցե նրանք ծովի այն կողմում սիրելիներ ունեն։ Եթե նրանք իրենց խոստումը երբեք չեն կատարել, թող հիմա դա անեն, Տե՛ր։

298 Մինչ մեր գլուխներս խոնարհած են, ինձ հետաքրքիր է այս մեծ, հսկայական լսարանում այսօր ձեզանից քանի՞սը կասեն. «Եղբայր Բրանհամ, ես նույնպես ուզում եմ հանդիպել իմ սիրելիների հետ։ Ես, ես, ես ծովի այն կողմում սիրելիներ ունեմ»։ Գուցե դու խոստացել ես, որ հանդիպելու ես նրանց, գուցե այնտեղ՝ գերեզմանատանը, այն օրը, երբ դու քո մայրիկին,

հրաժեշտ տվեցիր, գուցե երբ փոքրիկ քույրիկին հրաժեշտ տվեցիր կամ հայրիկին, կամ նրանցից որևէ մեկին, խոստացար, որ հանդիպելու ես նրանց հետ, և դու դեռ այդ պատրաստությունը չես տեսել: Չե՞ս կարծում, որ հիմա լավ ժամանակ է դա անելու համար:

299 Ներեցեք իմ ապրումները: Բայց, օ՜հ, դու չես պատկերացնում, բարեկա՛մ: Դու չգիտես, թե ինչ, ինչ զոհողություն է: Դա այնքան էլ կյանքի պատմություն չէ:

300 Ձեզանից քանի՞սը կցանկանային վեր կենալ հիմա և մոտենալ այստեղ աղոթքի համար, ասել. «Ես ուզում եմ հանդիպել իմ սիրելիներին»: Վեր կացեք այնտեղ՝ լսարանից և եկեք այստեղ: Չէի՞ք անի դա: Եթե ինչ-որ մեկը դեռ այդ պատրաստությունը չի տեսել: Աստված օրհի ձեզ, պարոն: Տեսնում եմ տարեց մի սևամորդ տղամարդու, որ գալիս է, մյուսները նույնպես գալիս են: Շարժվե՛ք, դուք, որ այնտեղ՝ պատշգամբներում եք, ուղղվեք դեպի անցում, կամ կանգնեք, նրանք, ովքեր ուզում են, որ իրենց հիմա հիշեն աղոթքի մեջ: Այսպես: Ոտքի կանգնե՛ք: Դա լավ է: Կանգնե՛ք ամենուր, նրանք, ովքեր կասեն. «Ես հայր ունեմ այնտեղ, ես մայր կամ սիրելի մեկն ունեմ այնտեղ: Ես ուզում եմ հանդիպել նրանց: Ես ուզում ես խաղաղության մեջ հանդիպել նրանց»: Չե՞ք կանգնի. պարզապես ոտքի կանգնեք, ամենուր՝ լսարանում: Կանգնե՛ք և ասե՛ք. «Ես ուզում եմ ընդունել»:

301 Աստված օրհնի ձեզ, տիկին: Աստված օրհնի ձեզ, այնտեղ հետևում: Ձեզ էլ օրհնի, որ այնտեղ՝ վերևում եք: Աստված օրհնի ձեզ, պարոն, որ այստեղ եք: Դա ճիշտ է: Այնտեղ՝ պատշգամբում, Տերն օրհնի ձեզ: Ամենուր՝ չորս կողմում կանգնեք հիմա աղոթքի համար, մինչ Սուրբ Հոգին այստեղ է և շարժվում է մեր սրտերի վրա, բարձրացնելու համար:

302 Գիտե՞ք, այն, ինչի կարիքն ունի եկեղեցին այսօր, դա բեկումն է: Մենք պետք է Բրուտի Տուն գնանք: Մեր կոշտ տնական աստվածաբանությունն երբեմն չի աշխատում: Այն, ինչի կարիքը մենք ունենք, դա հնաոճ բեկումն է, ապաշխարություն մեր սրտերում, հեզություն Աստծո հանդեպ: Սա բոլո՞ր են, ովքեր հիմա պատրա՞ստ են կանգնելու:

Խոնահրենք մեր գլուխները աղոթքի համար:

303 Ո՜վ Տե՛ր, Ով նորից Քրիստոսին բերեց...մեռելներից,

հավատքով մեզ բոլորիս արդարացնելու համար, հավատալով։ Ես խնդրում եմ, Տե՛ր, որ նրանք, ովքեր կանգնել են հիմա Քեզ ընդունելու համար, խնդրում եմ, որ ներում շնորհվի նրանց։ Ո՛վ Տե՛ր, և ես նաև խնդրում եմ, որ նրանք ընդունեն Քեզ՝ որպես իրենց Փրկիչ, Թագավոր և Սիրելի։ Եվ գուցե նրանք մայր, հայր կամ ինչ–որ մեկն ունեն ծովի այն կողմում։ Մի բան հաստատ է, նրանք Փրկիչ ունեն։ Թող իրենց մեղքերին ներում շնորհվի և իրենց բոլոր անօրենութունները ջնջվի, որ իրենց հոգիները լվացվեն Գառան Արյան մեջ, և նրանք այսուհետ ապրեն խաղաղության մեջ։

304 Մի փառավոր օր, երբ այս ամենը վերջանա, թող մենք հավաքվենք Քո Տանը և լինենք այնտեղ անխախտ ընտանիքներով, որպեսզի հանդիպենք մեր սիրելիների հետ, որ սպասում են մյուս կողմում։ Սա…մենք հանձնում ենք նրանց Քեզ, որ «նա, ում սիտերը ապավինում է Քեզ, պահես այն կատարյալ խաղաղության մեջ»։ Շնորհի՛ր այդ, Տե՛ր, մինչ մենք հաձնում ենք նրանց Քեզ։ Քո Որդու՝ Տեր Հիսուսի Անունով։ Ամեն։

305 Աստված օրհնի ձեզ։ Ես համոզված եմ, որ աշխատողները տեսնում են, թե որտեղ եք դուք կանգնած և մի քանի րոպեից նրանք կլինեն ձեր կողքին։

306 Իսկ այժմ դիմում եմ նրանց, ովքեր ստանալու են աղոթքի քարտեր։ Բի՛լլի, որտե՞ղ են Ջենին ու Լեոն, նրանք հետևո՞ւմ են։ Մի քանի րոպեից նրանք աղոթքի քարտեր են բաժանելու այստեղ։ Եղբայրը աղոթքով կարձակի լսարանը, և բաժանվելու են աղոթքի քարտերը։ Քիչ հետո մենք նորից կվերադառնանք այստեղ, որ աղոթենք հիվանդների համար։ Լավ, եղբայր։

59-0419A Իմ Կյանքի Պատմությունը
«Հրեշտակի Տաճար»
Լոս Անջելես, Կալիֆոռնիա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org